



ՄԱՍԻՍ

ԿԻՍԱԿԱՆԱՅ  ԳԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ,
ԳԵՂԱՐՈՒԵՄՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ—ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ



ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆիկենսենդրար Եօզուշու, Կ. Պոլիս

ՀԱՄԱՅՈՒՄ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳՈՍ

ԳՐԱՄԱՐՏ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ

Ռուսահայ գրականություն

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՀՐԱՅՐԻ ՄՈՒԹԻՆ

Խօսք ընդ Աստուծոյ

ՀՈՒՐ ՀԱՅՐԱՆ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

ԽՉՈՒԱԾ ԼԱՐԵՐ ՈՒ ԹՐԹՈՒՈՒՆ ԹԵԼԵՐ

Պըճըռկած կարծ . — Պըխմակ . — Նուէր ,

ԿԱՐՈ

ԿԱՆԱՆՅ ԱՇԽԱՐՀ

Ի՞նչ պէտք է ընեն մեր կիները

ՆԱՐԿՍՍ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուս եւ Անգլիական Համաձայնութիւնը

Մ. Ե.

«Մասիս»ի պատասխանները

ԶՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ . — Պոլսոյ , գաւառներու եւ արտասահմանի բոլոր գործակալներուն , բաժանորդներուն կը յայտնենք թէ իրենց անվճար մնացած բաժանորդագիրները պէտք է անյապաղ փութացնեն մեզ :

ԱՏԱԲԱԶԱՐ , ԳՈՐԾԱԿԱԼ . — Ապրիլ 20 ին ստացանք 64 եւ 258 թիւ ընկալագիրներու փոխարէնը , ուրեմն անվճար կը մնան տակաւին 61 , 63 , 184 եւ 294 թիւ ընկալագիրները որոնց փոխարէնը փութացուցէք մեզ :

ԻԶՄԻՐ , ԳՈՐԾԱԿԱԼ . — Կը հաստատենք ապրիլ 1 թուականով Ձեզ գրուած նամակը , որու փոխարէն որ եւ է պատասխան չենք ստացած : Ձեր պարտքի կողմը տակաւին անվճար կը մնան թիւ 100 , 102 , 308 , 309 եւ 349 թիւ ընկալագիրները , որոնց փոխարէնը կը խնդրուի որ անյապաղ մեզ հասցնէք :

ՊԱՐՏԻԶԱԿ , Մ. Յ . — Ստացանք Ձեր 24 ապրիլ թուակիրը . ուրախ ենք եթէ մեր յարգելի գործակալը իր բազմազգրող ըլլալուն պատճառով իր ձեռքովը ուզէ զՁեզ իր յաջորդը նշանակել , յառաջիկայ վեցամսեայէն սկսելով : Ձեր ներփակածը յարմար չէ «Մասիս»ի մէջ հրատարակելու համար :

ԽԱՐԲԵՐԴ , Ռ. Զ . — Կանոնաւոր կերպով 15 ական օրինակ միշտ կ'ուղարկենք Ձեր հասցէին : Ձեր գրութեան կը սպասենք անհամբեր :

ՏԻԱՐՊԷՔԻՐ , Մ. Դ . — Կը հաստատենք մեր ապրիլ 1 թուականով զրկած նամակը . փութացուցէք պատասխանը :

ՌՈՏՈՍԹՈ , Տօքթ. Ն . — Միշտ 10ական օրինակ կ'ուղարկենք Ձեր հասցէին . Ձեր նամակին կը սպասենք :

ՄԱՐԶՈՒԱՆ , Ա. Կ . — Կը հաստատենք մեր ապրիլ 1 թուակիրը , որուն պատասխանը չենք ստացած ցարդ : անհամբեր Ձեր նամակին կը սպասենք :

ԹԻՖԼԻՍ , Ե. Լ . — Ձեռք ընդունած Ձեր թերթին Դ. Տարուան առաջին գիրքը :

ՄԱՍԻՍ

ԿԻԱՍԱՄԱՆԱՅ  ԳԱՆՂԵԱ

48^{րդ} ՏԱՐԻ


— ❧ I ՄԱՅԻՍ 1899 ❧ —

ԹԻԻ 10

«Մասիս»-ի արտոնատէրը 17 Ապրիլ Թուակիր Հետեւեալ Ազգարարագիրը ընդունած է Տպագրական տեսչութեանէն :

Հայերէն «Մասիս» թերթը կանոնի հակառակ ընթացքի մէջ գտնուած ըլլալուն , կրկնուելու պարագային աւելի ծանր պատիժի ենթարկուիլը կ'ազդարարուի իր արտոնատիրոջ :


(Կնիք Տպագրական Տեսչութեան)



ՀԱՄՈՋՈՒՄԸ ԵՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ



Ս. Բ. Ռ Ս



ԻՄՍ. որ Ասլանեան սըր-
բազանի մեկնելովը, գիւ-
րին կատակարանութիւն-
երու արգահատելի անանկութիւն մը
կը տիրէ լրագրական հրապարակին վրայ,
ա՛լ ասոն է կարծեմք մասնանիշ ընելու
մեր օտարութիւններուն տխուր մէկ
կողմը, որուն վրայ երսուն տարիէ ի
վեր որ և է ազդեցութիւն չէ ունեցած
բարքերու փոփոխութիւնը և որ կը
յաւէրժանայ մեր մէջ, հակառակ նո-
րագոյն գաղափարներու ծաւալմանը
և անոնց աւելի կամ նուազ կիրառու-
մին՝ մեր վարչական գրութեանը մէջ:

Ասիկա չըրինք աւելի առաջ, որպէս
զի կողմնակցութեան որ և է կասկած
կարելի չըլլայ վերագրել մեր ըսածնե-
րուն, և որպէսզի չկարծուի թէ անձ-
նական ծառայութիւն մը կուզենք մա-
տուցանել Ասլանեան սրբազանին, իր
դժկամէութիւնը արդարայնելով: Մեր

գործը սկզբունքին հետ է և ոչ միշտ
դէպին, և չենք համակրիր հրա-
պարակագրութեան այն ձեւին որուն
նկատումներն ու համոզումները առնչու-
թիւն ունին գործէն աւելի անձին հետ,
որ դէպք մը դատելու համար միշտ
եւնրական վնասելու պէտք ունի, արա-
մաբանական լուծումի վարժուող ուսա-
նողի մը պէս. և եւնրական գտնելէն
վերջն ալ կը փութայ ստորագելիները ու
րոշել... Բաժանորդագրութեանց տես-
րակը աչքէ անցնելով:

Սակայն նախ պէտք է որ քանի մը
վերապահութիւններ ընենք դիւրիմա-
ցութիւններու տեղի չտալու համար:

Ամէնէն աւելի գնահատողներէն ենք
կարգապահութիւնը (discipline), որ ա-
մէն վարչութեան հոգին է: Կործանա-
րար կը համարենք անոր պակասը մեր
կղերական պաշտօնէութեան մէջ և ա-
ռաջինն ենք այպանելու այն վարդա-
պետներն ու եպիսկոպոսները, որոնց
իտեալն է Պրլոյ մէկ հարուստ թաղին
քարոզչութիւնը և աթոռ մը կրօնական
ժողովին մէջ:

Աստուծոյ չէ որ կը կառավարուի հօտ մը . Վաստի որ եղբայրք պատշաճօրէն առնեն վրան կրթներէն համար չէ որ ժողովուրդը իր հոգեւոր հովիւներուն ձեռքին մէջ դրած է գաւազանը . այն եկեղեցականները , որոնք մինչեւ իրենց եկեղեցական սքեմը ստացած ատենը անձնազոհութիւն խոստանալէ ետքը , « ոչ կարեմ » կը կոխեն ամենէն պղծաբանի ծառայութիւն մը խնդրուելուն պէս , և իրենց կամքին անկախութեանը խօսքը կ'ընեն , ուխտադրութենք են անշուշտ , որոնց դէմ մանաւանդ պէտք է գործածուի գաւազանը , ինչպէս Քրիստոս գործածած է զայն տաճարին սրբութիւնը չարագործներուն դէմ :

Բոլոր եկեղեցական պաշտօններուն մէջ , ինչպէս են քարոզչութիւնները , հովուութիւնները , առաջնորդութիւնները ևն , որոնց մէջ ընտրեալը բացառապէս արգելիչ պատճառ մը չունի , մերժումը դասալքութիւն մը կը նշանակէ , և ազդին համակրութիւնը պէտք է որ անվերադառնալի կերպով կ'որոնցնէ այդ կերպով վարուողը :

Սակայն երբ խնդիրը սովորական պաշտօնի մը սահմանը կանցնի , երբ մէկուն կ'առաջարկուի արտակարգ վիճակի մը կարգադրութեանը հոգը ըստանձնել , երբ տեսակ մը բարոյական հիւանդութիւն կայ մէջտեղը , որուն դարման տանիլ կ'առաջարկուի եպիսկոպոսի մը , անիկա իրաւունք ունի իր գաղափարները , իր ծրագիրը , իր նախընտրած դարմանը , յայտնելու և ըսելու « ես այս ձեւով և այս պայմաններուն մէջ կրնամ կատարել այս գործը » :

Ու երբ այդ ձեւն ու պայմանները իր անձին չեն վերաբերիր այլ գործին , երբ ուղղութեան ու համոզումի վրայ

կը գառնայ խնդիրը , ոչ ոք իրաւունք ունի այսպէսով եկեղեցականը , ծրագիր մը և համոզումներ ունենալուն համար :

Զարմանալի պիտի ըլլար արդարեւ , եթէ տարիներով ողբալէ ետքը մեր եկեղեցական դասին մէջ գաղափարի և ուղղութեան պակասը , հիմա ալ սկսէինք ցաւ , յայտնել եպիսկոպոսի մը իրեն առաջարկուած պաշտօնը պարզ ճամբորդութենէ , ի ցոյցս մարդկանց երթալու գալէ տարբեր բան մը նկատուելու , զայն ուսումնասիրելուն , անոր լուծմանը միջոցները ցուցնելուն , ու այդ միջոցներուն իրեն հայթայթուիլը խնդրուելուն համար :

Եթէ կը փափաքինք որ կարգապահութիւնը յարգուի մեր կղերին կողմէ , մեր փափագը չ'երթար մինչեւ բաղձալու որ համոզումի եւ նկարագրի ջրնջումը նշանակէ անիկա . համոզումէ , ուղղութենէ , ձեռներէցութենէ զուրկ բարձրաստիճան եկեղեցականէ մը , մանաւանդ երբ արտակարգ վիճակի մը հանդէպ կը գտնուի անիկա , կարելի չէ մեծ ծառայութիւն մը սպասել . եւ չ'իտակը՝ մենք կը կարծենք թէ , մտքին (այսինքն խորհելու եւ դատելու կարողութիւնը) ջնջումը նշանակող կարգապահութիւն մը (որուն համար արդէն շատ անյարմար է այս բառը) նոր աղէտ մը կրնայ գառնալ մեր եկեղեցականութեան արժանիքին տեսակէտով :

Ու երբ դարմանի եւ ուղղութեան տարբերութիւն մը կայ մէջտեղը , բոլորովին անտեղի կը գտնենք կիրառութիւնը շուկայի յատուկ այն հինցած միջոցին որուն սովորութիւն է դիմել մեր մէջ երկու տարբեր տեսութիւն հաշտեցնելու համար , եւ որուն պառակա-

կան նշանակիչ բացատրութիւնով մը խա-
թէր հաւաք անուանը կը տրուի :

Համոզումին կարեւորութեանը ուրբան
սխալ ըմբռնումին արտայայտութիւնն
է այդ խաթէր հաւաքը , որ հաճոյքին
հետ կը շփոթէ զաղախաւը , որ բարե-
կամի մը ազդեցութեանը ենթակայ կը
համարէ հանրային գործ մը իր համո-
զումին հակառակ կերպով վարելու հա-
ւանիլը , ու տարբերութիւն մը չգնե-
ր պղտիկ շահ մը զոհելու եւ մտած-
ուած , ուսումնասիրուած , ծրագիրէ մը
հրաժարելու մէջ :

Պաշտօններու եւ պարտաւորութեանց
այս տեսակ ըմբռնումովը չէ որ կրնանք
յառաջդիմութիւններ յուսալ մեր վար-
չական գրութեանը մէջ :

Ու երբ լրագրութիւնը պարզապէս
երթալու կամ չերթալու խնդիր մը կը
տեսնէ հոն , ուր ամբողջ ծրագիր մը կայ,
մարդ կը փորձուի հարցնելու թէ արդ-
եօք որ եւ է յառաջդիմութիւն ըրած
չե՞նք թիւ պէնտենանէն եւ Մինտո Գա-
բամանէն ի վեր :

Նկարագրի տէր , գործը խղճմտօրէն
ուսումնասիրող եկեղեցականներու պէտ-
քը շատ զգալի է մեր մէջ . այս յատ-
կանիչներով մէկը եղած է միշտ Ասլան-
եան սրբազանը , եւ չենք կարծեր որ
իր վերջին պաշտօնին առթիւ տեղի ու-
նեցած բանակցութիւնները իր իբր նկա-
րագրի տէր եւ խորհող մէկը ունեցած
համբաւը նսեմացնելու բնութիւնը ու-
նենան :

ԳՐԱՄԱՐՏ

ԱՌ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Տղա՛ս .

Իբրեւ նախանձախնդիր Մաւիս Հանդի-
սին ու նոր սերնդեան արժանապատուու-
թեան ու զարգացման , փափագելի էր ինձ
որ գրական ուսումնասիրութիւն մը կամ բա-
րոյանկարագրական հատուած մը գրէիք նորէն
Մաւիսին՝ ինչպէս որ ըրիք Ծնունդին ու Մեծ
պահքին , փոխանակ ինձ ուղղած Ձեր Բաց
նամակին՝ ուր սրտին ու տաղանդին տեղերը
... բա՛ց կը մնան :

Այդ ոճով եւ այդ ոգով գրուած նամա-
կի մը ո եւ է որ պարտական չը համարիր ինք-
զինքը՝ պատասխանելու , նոյն իսկ եթէ հար-
ցում կամ հարցապնդում մ'եղած ըլլայ իրեն հոն՝
որպէս Ձեր նամակին մէջ : Սակայն ներողա-
մտութեան սկզբունքն , որուն ա՛յլ սկզբանց

հետ՝ կը հետեւիմ որքան հնար է մարդկօրէն ,
իմ վրաս պարտք կը դնէ պատասխանել Ձեր
հրապարակային թուղթին , յուսալով՝ Ձեր
պատուոյն ու նոր սերնդեան պատուոյն հա-
մար՝ որ աւելի ծանր լեզուով եւ առաւել ար-
դարասէր ոգւով կը գրէք այսուհետեւ Ձեր
գէթ հրապարակային նամակները :

Ձառ զատ պիտի պատասխանեմ կարգաւ
Ձեր Բաց նամակին չորս մասերուն , — Գնա-
հատական մաս , Նախատական՝ այո՛՝ մաս ,
Գրահարցական մաս , Անձնական բացատրու-
թեանց մաս : Եւ պիտի ջանամ , որպէս միշտ,
որ ըստ կարի հանրային նկարագիր ու շա-
հեկանութիւն մը տամ գրուածոյս , որպէս զի
չը տրանջան ընթերցողք՝ ինչպէս որ Ձեր զը-
րութեան առթիւ՝ թէ կարի յո՛յժ անձնական
է այս գրուածը :

Ա.

ԳՐԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թերեւս յօդուածոյս սոյն Ա. հատուածոյն սկիզբն անդէպ չէ մեղամաղձոտ բաղդատութիւն մ'ընել եւրոպական գրականութիւններէն միոյն ու մեր հայ գրականութեան միջեւ Քանի՜ փոքր ու խոպան՝ Հայոց գրական աշխարհն, որքա՞ն ցանցառ ու ցամաք՝ Հայ մտքին արտադրութիւնք, որքա՞ն համեմատաբար սուղ ու փանաքի՜ այդ արտադրութիւնք ընդհանրապէս. եւ, աւելի մանրամասնելով, մեր գրական լեզուն դեռ որքա՞ն աղքատ ու ջլատ, բացատրութիւնք որքա՞ն մաշած միօրինակ, ամենէն մեծ գործնէրուն ալ գրուածոց որքա՞ն դեռ սակաւաթիւ բառ կը մատակարարէ գիտական ու դեղարուեստական բառարանը։ Թղթաբերին ժամանումէն վերջ՝ երբ նոր հրատարակութեանց ցրուումը կատարուած է գրավաճառատան սեղաններուն վրայ, մտի՜ր գրատուն մը եւ աչքդ պտտցո՛ւր ամսուան կամ շաբթուան Հանդէսներուն ու կրնայ ըսուիլ օրուան գրքերուն վրայ (քանի՜ որ օ՛ր չանցնիր որ գիրք չը հրատարակուի յեւրոպա մէջ մի ժողովրդեան մէջ)։ Ի՞նչ պիտի տեսնես. միեւնոյն գրողին անունն, որ սքանչելի էջի մը ներքեւ կը փայլէր վերջին կարգացած եւրոպական օրաթերթիդ մէջ, պիտի տեսնես զայն նորէն շաբաթաթերթի մը բովանդակութեան մէջ, կիսամետայ Հանդիսի մը բովանդակութեան մէջ ալ, ամսաթերթի մը բովանդակութեան մէջ ալ դարձեալ, ու գիրքի մըն ալ վրայ։ Հոս յօդուած մը գրած է, հոն ուսումնասիրութիւն մը, հոս էջ մը, հոն վէպ մը, անդին քերթուած մը, աւելի անդին քննադատութիւն մը, խօսուըռտուը կամ ժամախօսութիւն մը. եւ բացած նոր օրաթերթիդ մէջ իր մէկ թատրերգութեան առաջին ներկայացման վրայ կը խօսուի. եւ նոյն թերթին մէկ անդադոնապահութենէն կ'իմանաս որ նոյն հեղինակը նոր գործ մը գրելու վրայ է... Ընկերաբանութեան վրայ ⁽¹⁾։ Եւ այդ

⁽¹⁾ Այդ տեղալից գրական գործունէութիւնն արդիւնք է... չլային հիւանդութեան, մէկ բառով՝ յիմարութեան։

ամենը վարպետի գրչով գրուած։ Եւ այդ ամենուն մէջ — կամ գոնէ շատին մէջ — նոր գաղափարներ ու նոր պատկերներ, նոր բաներ ու նոր բացատրութիւններ, նոր բանաձեւներ ու նոր խորհրդապատկերներ, իրաց նորագոյն ու յստակագոյն ըմբռնում եւ անձանց նորագոյն ու ներագոյն թափանցում, նորեւրանդ նկարագրութիւն, նորայանգ նորանուագ քնարերգութիւն, նորաքննին նորածան հոգեբանութիւն, նորախորին նորարան իմաստասիրութիւն, Ռէօնթիկենասուր զիտողութիւն՝ ընկերութեան ու թէ՛ հոգւոյն ովկիանոսին մինչեւ յատակն ու խորքը, մինչեւ անդադոնային արծուէթոյն հերձապացում՝ ու միւսում մինչեւ ընկերային գեհններուն ներքին խորշերն ու ներբաւիղներն։

Ո՛վ կ'ըսէ թէ մեր գրողներէն շատեր նոյն գործունէութիւնը չը պիտի ունենային նոյն միջավայրին մէջ։ Ես մերինէն ուշիմ տարրի չը հանդըպեցայ եւրոպա ուղեւորութիւններու մէջ. ուստի միեւնոյն պայմաններուն մէջ մերոնք քան եւրոպացիներն ու Ամերիկացիներն ընդարձակագոյն ունենային թերեւս գործունէութիւն։ Սակայն այսօր, չը գիտեմ ուրիշներն, այլ ես կ'ամչնամ գրեթէ ինքզինքս գրագէտ համարելու։ Բան մը միայն դիտեցի քառորդ դարու գրողի փորձառութեան մէջ. թէ գնահատումը գործունէութեան եթէ ոչ անհրաժեշտ այլ գոնէ մեծ պայման մըն է։ Քանի՜նե՛ր, եւ առաջիններէն՝ սրոնց գործերն ի մասնաւորի կամ ի հրապարակի գնահատած էի, երբ լաւագոյն արտադրութիւններ ըրին՝ չնորհալիւք ինձ յայտնեցին, յայտարարելով թէ ինծի շատ պարտական էին, այսինքն իմ գնահատմանս ինչ բանի որ լաւ ըրած էին եւ որ գրգռած առաջնորդած էր զիրենք լաւագոյնին։ Փոխադարձաբար քանի՜օն պարտիմ ես ալ⁽¹⁾ իմ

Հարցո՛ւր, եթէ չես հաւատար, յիմարարոյժներուն, նոյն իսկ Մամիսի Տնօրէն-Խմբագրապետին՝ ո՛ր յիմարաբուժական մասնագիտութեան Տօքթօրային համար իր քեզը հրատարակեց նախորդ թիւերով։ Փառք չտա՞ք որ մենք դեռ հիւանդ չենք կամ արեւմտեան ազգաց գտնուած ջլախտային յառաջացեալ վիճակէն դեռ բաւական հեռու ենք։

ՃԻՆ ՅԱԿՈԲ

⁽¹⁾ Խոստովանէ՛, Գրասէ՛ր, որ ամենէն պերճախօս հատուածներդ թշնամանաց կարկուտին ներքեւ արտադրած

գնահատիչներուս , իմ քննադատներուս (դատող ու գնահատող՝ աւելորդ է ըսել՝ կը միանան «քննադատ»ին մէջ) :

Անոնց դատուն մէջ ահա դուք ալ կ'աւելնաք , ազնիւ Անտոնեան : Ձեր բառով՝ « առաջդիմելու » ⁽¹⁾ ոչ հետս , այլ յառաջդիմելու համար տենդ իսկ ունեցող մէկու մը մտաւոր գործունէութեան անհնար է որ իբրեւ ազդակ չը ծառայէ Ձերինին նման ցեղունի գրողի մը գնահատումն՝ որ կոչուած է մեծ ապագայի : Գրողը՝ գիտէք՝ ամենէն ազդակը՝ րական էակն է . ազդակըութիւնք կամ զգայութիւնք մերթ իրար չէգործացնելու կամ իրար ջնջելու երեւոյթն ունին . այլ աննկուն հոգին , երբ գրողն անով օժտուած է , կ'իշխէ ամեն զգայութեանց եւ զանոնք կ'ուզէ , զանոնք յօգուտ ի կիր կ'արկանէ իր նպատակին՝ որ է — կատարելագործում : Իբրեւ աննկուն հոգւոյ տէր , երկիւղ չունիմ որ Ձեր գնահատման հակառակակողքիւն , որ բնականաբար պիտի տարասեռէր կամ մանաւանդ հակասեռէր յիս զգայութիւններն , իմ գրական խառնուածքին բնականոն զարգացման վնասէ՞ , Հակառակքիւն , այո՛ , տղա՛ս . չես նշմարած գրած ժամանակդ : Հետագայ պարբերութեամբ կը սկսի Բաց նախակ . « Հիանալի սղիւսթ մըն էք , բանաստեղծ մը՝ բառին ամենէն լայն առումով , ու միանգամայն գրչի վարպետ մը : » (Ձեր յօդուածոյն շարունակութեան մէջ սղիւսթին գնահատումը կը գե-

ես եւ ամենէն ներշնչեալ քերթուածներուդ Մուսան Տառապանքն եղած է : Ներկայ տափակ հատուածդ կամ յօդուածդ բացառութիւն է . իսկ թէ Արամեան , ըսել կ'ուզեմ Թառամեան թշնամանքները կրնա՞ն երբէք արդարանալ , այդ ուրիշ խնդիր է :

ՃԻՆ ՅԱԿՈԲ

(1) Աւելի ճիշդ չէ՞ յառաջդիմել . «Առաջարան»ին կամ «նախարան»ին առաջ (նախ) բառն avant է գաղղիերէնի մէջ , մինչ «յառաջդիմել»ին մէջ en ayant !

(2) Բարի սիրելի Եղիա՛ս , պատրանք մի՛ տաճեր , ա՛լ յառաջադիմութիւն չես կրնար ընել : Յետադիմութեան վիսցիր . (իսկ ես կը վիսնամ որ...կամաւ յետադիմես իբրեւ սնուցիչ , իբրեւ խաղ , կամ յետադիմութեանդ գիտակցութեան մէջ նոր զգայութիւններ փնտնելու համար , նոր զգայութեանց խնդր մը որ ես) : Եթէ ճանապարհորդութիւն մ'ընես . . . անդիի աշխարհը , վերադարձիդ թերեւս նոր փուլի մը մէջ մտնէ , նոր փայլ մը ստանայ . . . բանճարդ :

ՃԻՆ ՅԱԿՈԲ

րազրականէք , անուանելով զիս « մեր ամենէն սղիւսթ գրագէտը ») : Ձեր նամակին երկրորդ պարբերութիւնն է . « Համբաւ մը ունիք՝ որուն ոչ ոք հասած է մեր մէջ , նոյն իսկ ձեզմէ շատ աւելի արժանաւորները » : Եթէ հակասութիւն չէք գործեր , եթէ մէկ պարբերութիւնէ միւսն , եթէ նոյն իսկ պարբերութեան մէկ անգամէն միւսն « անկայուն » ըլլալ չէ... նպատակնիդ , ուրեմն պէտք է ընդունիլ թէ՛ ճարտասանական նո՛ր ձեւ մը կը գործածէք : Գիտէի որ ճարտասանութիւնն , եթէ ոչ ազդէ ազգ , կը փոխուի ժամանակէ ժամանակ . այլ մէկ պարբերութիւնէ յաջորդն , այդ չէի՛ . . . համարձակեր գիտնալ : Թօգուածոյս յաջորդ հատուածոյն թողով Ձեր իսկ խօսքերով ուղղել բարոյական Եղիային վրայ այնքա՛ն թեթեւօրէն արտասանած Ձեր դատաստանն , ես , գնահատական Ձեր մէկ . . . չոր պարբերութեան հակառակ , բարութեան՝ բարոյականութեան խմորը պիտի չօշափեմ Ձեր սրտին խորն : Եւ ասի փորձական (empirique) եղանակաւ չէ , այլ գիտականօրէն , հոգեբանական գիտութեան օգնութեամբ ու հեղինակութեամբ : Հոգեբանն որ կայ յիս՝ Հոգեբանութեան ուսուցիչը՝ կը հաստատէ թէ , Ձեր գնահատական պարբերութիւնն երկու անգամ տառական յամառ նոյնութեամբ մը կրկնուած է Ձեր գրութեան մէջ , մինչդեռ այդ գնահատումն եղծանող պարբերութիւնն անգամ մը միայն ⁽¹⁾ . եւ մականօրէն կը վճռէ հեգաբանը , թէ . . . դատու կամ դարավերջի զաւկի մը պէս չոր երեւնալ կ'ուզէ Արամ Անտոնեան , բայց իսկպէս բարի է այն : Ձիս արժանաւորագոյններէն մին հռչակելէ յետոյ , ինձմէ « շատ աւելի արժանաւորներ » կը գտնէք : Ո՛հ , կը փոփագէի որ ինձմէ « շատ աւելի արժանաւորներ » չատ ու չատ ըլլային ազգին մէջ , այլ Ձեր

(1) Հոգեբանական գիտութիւնդ շատ կարճ է , գիտնալիստուն ուսուցիչ Հոգեբանութեան : Այդ գերադասեալ գովեստի . . . ցուրտ բանաձեւին բառ առ բառ կրկնութիւնը թշնամանայ . . . ձայնաշարի մը սկիզբն ու վերջը՝ խաբուսիկ կարմիր ժապաւէնները չե՞ն , կպտուած տողաւկի մը բերանն ու տակն , ուրկից դուրս պիտի ելնէ՛ ի՞նչ . . . բայց միայն նախատինք ու թշնամանք :

ՃԻՆ ՅԱԿՈԲ

բացատրութեամբ իսկ անհնար է որ ճշմարտութիւն մ'ըլլայ Ձեր այդ դատաստանը : Ձեր այն բացատրութեամբ , այո՛ , « բանաստեղծ մը բառին ամենէն լայն առումով » , աւելաւորել ընտրելոց հետ անբաղադրելի զիրք մը կուտաք « Եղիային »՝ Հայ գրական աշխարհին , Հայ գրական երկնքին մէջ կրնամ բաշխել : — Բովանդակ իննեւստաներորդ դարուն մէջ՝ յայտ է Ձեզ՝ Ֆրանսան ունեցաւ չորս բանաստեղծ միայն « բառին ամենէն լայն առումով » , Լամարտին , Հիւկօ , Միւսէ , Վէռլէն . մեծ անիրաւութիւն պիտի ընէինք՝ Միւսէն դաւալ մոռնալով : Այդ բոլոր՝ բովանդակ դարու մը համար , եւ ամենէն մեծ դարուն համար : Արդ , այնքա՛ն ատենաբաններէ , պատմագիրներէ , թատերագուհիներէ , վիպասաններէ , գրագետներէ , ի մի բան այնքա՛ն մասնազոյններէ ո՞րը կրնաք այդ հինգ բանաստեղծներէն աւելի մեծափառ համարել , թողլով իրենց արձակ երկերն ու զանոնք միայն իրենց բանաստեղծութեանց հեղինակ նկատելով , նոյն իսկ նկատելով Վէռլէնը՝ զոր օրինակ՝ իբրեւ միմիայն Սաթէսի հեղինակ , նոյն իսկ Ալֆոնս Եր Միւսէն իբրեւ Լա Նիւի Տը Միւսէն հեղինակ : Գաղղիայէն անցնելով Գերմանիա , կրնաք Հայերի Հայնէին առթիւ ըսել թէ՛ իրմէ « չա՛տ աւելի արժանաւորներ » կը ճանչնաք . Հայերի Հայնէին , որ գիրք մը չէ գրած եւ ինքը կը խոստովանի թէ գիրք չը կրնար գրել (որովհետեւ Տը Լ'Ալլըմայնն ու Բայզէպիշեօնի մէջ այլոց՝ անջատ հատուածոց հաւաքածոյք են միայն) : Գերմանիայէն ալ անցնելով Հայերուն , ո՞ր հեղինակի փառքը կրնայ գերազանցել Պետրոս Դուրեանին , ո՞ր հեղինակի անուն — թո՛ղ գրութիւն — այնքան կրնայ լուրջ ընթերցողն ո՞րքան այդ պաշտելի աւանդն : Ո՛հ , « բառին ամենէն լայն առումով բանաստեղծ » ին մէջ անբացատրելի՛ բան մը

կայ , որ ո եւ է հզօր հեղինակի զօրութենէն աւելի զիւրաւ կը փոխանցուի մարդուն եւ աւելի խորապէս կը գործէ կը ներգործէ մարդուն մէջ :

Հիմայ , կ'աղաչեմ , աղնի՛ւ Անտոնեան , ետ ա՛ռ այդ գովեստդ ինէ՛ : Յորքա՛ն կենդանի եմ , գերադրական (թո՛ղ ըլլայ մեր միջավայրին համար միայն)՝ գովեստ մի՛ ընծայէք ինծի . Աստուծմէ կը վախնամ : Մահուանէս յետոյ , անմահից գալինեպսակին եթէ արժանամ , այն ժամանակ տարբեր բան է մահականացուն յետ մահուն կը սրբուի , կը մեծանայ , կ'աստուածանայ : Մեծարանք այժմ մեծարանաց ընծայենք միասին մեծերու մեծին՝ անունով եւ իրաւամբ Նահապետին , ամենէն աւելի երկայնաշունչ գործեր արտադրած բարձրարժան մեր հեղինակուհւոյն ու մեր հեղինակին՝ Տիկին Տիւսաբին ու Մամուրեանին , Սիպիլին՝ նոր սերնդեան սխրագոյն Մուսային , Գրիգոր Զօհրապին՝ նոր սերնդեան ամենէն յանդուգն ու հզօր յառաջապահին , ու մասնաւորապէս գաւառացի գրողներու այն փայլուն ու եռանդուն խումբին , որոնք , հեռու կեդրոնէն , մերթ ամենէն աննպաստ պայմաններու մէջ , գրելէ քարը ձեղքելով ու մէջէն ծլելով եւ՝ անմահ կէօթէի բացատրութեամբ՝ մամուռին նման անջրգի ժայռէն իրենց անուանդը քաղելով կ'անհատանան , կ'ուռճանան , կը զօրանան մինչեւ կազմելու չափ գրականութիւն մը գաւառական , որ չը կրնար անշուշտ զիմադրել կեդրոնական տոհմային եւ օտար համագգային գրականութեանց ազդեցութեան , այլ որ կը նկրտի , այլ որ կը ցանկանայ « փրփուր յատակից կը կը հանէ » , որպէս զի իր ինքնութիւնն , իր գաւառական նկարուն նկարագիրն անայլալ պահէ :

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՅԻՊԱՇԵԱՆ



ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆ. — Բանաստեղծուրիւն-
ներ, Բ. հատոր (1892—1898). — Մոսկուա, Տպարան
Բ. Բարխուդարեանցի



Ա.

. Ալեքսանդր Շատուր-
եան Ռուսահայոց ա-
մէնէն ծանօթ, ինչպէս
նաեւ շատ ալ համբաւ-
ուած բանաստեղծնե-

րէն է : Իր բանաստեղծութեանց այս երկ-
րորդ պրակը՝ սիրուն տեսքով հատոր մը
ինքնին, բաւականէն աւելի գնահատուած է
Կովկասահայոց կողմէ եւ նոյն իսկ իր վրայ
հիացողները Մոսկուայի առաջնակարգ հիւ-
րանոցներէն մէկուն՝ Օթէլ Ռոսիայի մէջ հաց-
կերոյթ մը տուած են վերջերս, իրեն նուի-

րելով նաեւ արծաթեայ թանաքաման մը՝ «իւր
սարգ ու կարգով» :

Այս ամէնուն հակառակ սակայն, եթէ
երբեք այդ գիրքը Պոլիս տպուած ըլլար, հե-
տաքրքրութիւն անգամ չպիտի կրնար առ-
թել, քանի որ արեւմտեան Հայերու տեսա-
կէտով այդ ահագին ըստեղծ չափ ընդարձակ
հատորին մէջ հազիւ քանի մը կտորներ
կը գտնուին, որոնց կարենանք «սիրուն»
ածականը տալ : Մնացածին ամբողջու-
թիւնը՝ մեր աչքին տարբերութիւն մը
չպիտի ունենար ո՛ր եւ է Պատուելի Բաղաս-
սարի մը եւ կամ Թուրքանի մը (թ ով ան-
շուտ) բարբառնջանքներէն՝ որոնք ահռելի տա-
րճնիակութեամբ մը դեռ կը գտնուին մեր ա.
մէնէն աւելի « հասկցող » ճանչուածներուն
կողմէ :

Ու միայն Պ. Շատուրեանի բանաստեղ-
ծութեանց համար չէ այս զանազանութիւնը :
Ռուսահայ բանաստեղծներէն բոլոր անոնք՝ ո-
րոնք բան մըն են Կովկասի մէջ, չէ՛ թէ

միայն իրենց արտագրութիւններով չպիտի կրնային զմեզ գոհացնել, հապա նոյն իսկ ամենատափակ գրողներու տեղ պիտի դասուէին, հոգ չէ թէ ռուսահայ մամուլը՝ իր լաւագոյն յանձնարարագիրները տուած ըլլար անոնց :

Այս անհասկանալիութիւնը ունի իր բազմաթիւ պատճառները՝ որոնց գէթ ամենակարեւորին վրայ կ'արժէ ծանրանալ, Կովկաս տպուած բանաստեղծութեանց հատոր մը քննադատելէ առաջ Արեւելեան եւ արեւմտեան Հայոց ըմբռնումը՝ բանաստեղծութեան մասին, հիմնովին կը տարբերի իրարմէ : Ռուսահայոց համար բանաստեղծութիւնը Գաղափարին մէջ կը կայանայ ընդհանրապէս, մինչդեռ մենք, Արուեստը կը փնտռենք ամէն բանէ աւելի : այսպէս է նաեւ գրական միւս գրեթէ բոլոր սեռերուն համար ալ : Անոնք՝ ոտանաւորը կը կազմեն առանց բնաւ արուեստի տեսակէտը աչքի առջեւ ունենալու : իրենց բովանդակ ջանքը՝ քերթուածներուն մէջ ձգտում մը՝ դադար մը դնելուն մէջ միայն կը կայանայ : կը բաւէ որ բան մը ըսած ըլլան եւ արդէն իսկ բանաստեղծութիւն մը գրած կը համարուին : Բանաստեղծութիւն մը սակայն՝ որ պոչ ու ականջը կտրուած կատուի մը «միաւ»ներէն չի տարբերիր բնաւ, քանի որ ոչ յանգ ունի խնամուած, ոչ ալ կատարեալ կազմութիւն, այլ բան մը կ'ըսէ միայն : Ատոր բոլորովին հակառակը՝ ոտանաւորին մէջ արուեստը ամէն բան է մեզի համար, մինչդեռ գաղափարի տեսակէտը՝ ինքնին չա՛տ սահմանափակուած՝ միշտ երկրորդական կը մնայ :

Ըմբռնումի այս տարբերութիւնը՝ որով կարելի կ'ըլլայ բացատրել թէ ինչո՞ւ Կովկասի մէջ լաւ համարուած արտագրութիւններ իբր անճաշակ ու գէշ գրուածներ կ'ընդունուին հոս, ինքն ալ իր պատճառը ունի, որ շատ պարզ է ինքնին : Մեր տեղական գրականութիւնը իր արդի վիճակին հասած է մի՛ միայն Ֆրանսական գրականութեան հետեւողութեամբ, թէ որչա՛փ կրցած է օգտուիլ այդ հետեւողութենէն, ասիկա տեղ չի կրնար բռնել այս յօդուածին մէջ. վեր հանելիք կէտս սա է միայն թէ այդ հետեւողութեան ուղղակի պատճառաւն է որ մենք այսօր այնչափ տեղ կու տանք արուեստին, քանի որ եւրոպական

գրականութեանց մէջ, Ֆրանսական գրականութիւնը առաջինն է՝ ուր արուեստը իր կատարելագործութեան հասած ըլլայ, ամէնէն աւելի իրեն խնամք տարուելուն համար : Այս եկամուտ ազդեցութեան տակ, մեր տեղական գրականութիւնը տակաւ արուեստին շուրջը խտանալ սկսած է, կամաց կամաց արուեստը արուեստին հաւաք ի տեսակ մը ձեւ առնելով, որուն սակայն իբր գլխաւոր պատճառներ պէտք է նկատել նաեւ տեղական պայմանները : Ռուսահայերուն համար, այդ միջավայրի պայմանները գրեթէ գոյութիւն չունին ու մանուկանդ իրենք չատ ալ քիչ ազդուած են Ֆրանսական գրականութենէն : Ռոմանթիզմի թե՛ թե՛ հետեւողութիւն մը միայն կայ վերջին տասը տարիներու ռուսահայ բանաստեղծութեան մէջ, — եւ այն ալ ռուսականէն փոխ առնուած, — ինչ որ սակայն անխուսափելի պիտի ըլլար, քանի որ ամէն գրականութիւն՝ այդ գրական համատարած ուղղութեան ազդեցութիւնը կրած է աւելի կամ նուազ համեմատութեամբ : Ատկէ դուրս, Ռուսահայոց գրականութիւնը ձեւուած է Հիւսիսի՝ մասնաւորաբար ռուս ու գերման գրականութեանց վրայ, որոնց մէջ արուեստը երկրորդական տեղ մը կը բռնէ միշտ, ու գաղափարն է որ ամէնէն աւելի կը տիրապետէ : Անոնց մէջ չկան Ֆրանսականին այն բոլոր աւելորդաբանութիւնները՝ որոնք արուեստը արտայայտելու համար եղած շեղումներ են ընդհանրապէս : անոնց մէջ, իրերու խոր, ուսումնասիրուած քննութիւն մը կայ, տարբաւոր չի հոգեբանութիւն մը, ու գրեթէ միշտ քանի մը տողերով չատ բան կ'արտայայտուի, նոյն իսկ առանց արուեստը վտարելու :

Ռուսահայերը՝ միջավայրի պայմաններէն նպաստաւորուած, այս ուղղութեամբ գաղափարային գրականութիւն մը մշակած են, թէ՛ եւ շատ անգոյն ու գէշ կերպով, Հիւսիսի գրականութեան ձեւէն միայն օգտուած են, «մօտեւ»ներէն, ինչպէս որ կը սիրեն ըսել : չեն թափանցած հետեւածուն, չեն կրցած հասնալ զայն ու ճիշտ մեզի պէս կապկային ընդօրինակութիւն մը սկսած են, ինչ որ կը շարունակուի դեռ : Թարգմանութիւններ ըրած են առանց մէթոտի, առանց

ընտրութեան , ու բնաւ չեն փորձած հեղինակ մը հայացնել եթէ ո՛չ անոր բոլոր գործերով , գէթ անոնցմով միայն՝ որոնք անկէ գրուած լաւագոյն երկերը կը համարուին : Միակ փորձը որ այս մասին եղաւ՝ Շէքսպիրի գործերուն թարգմանութիւնն էր՝ որուն ձեռնարկեց Յովհաննէս խան Մասէհեանց , հիմա անձնական թարգմանը՝ Պարսից Շահին . ձեռնարկ մը որ յաջողեցաւ , եւ քննադատութիւնը ընդհանրապէս գովեստ միայն ըրաւ Պ. Մասէհեանցի համար :

Գէշ հետեւողութեան այս տեսակէտը՝ մասնաւորելով բանաստեղծութեան մասին , պէտք է դիտել որ ոտանաւորին մէջ ա՛լ աւելի կը շեշտուի անիկա . միշտ ձեւն է որ կը պահուի հետեւողութեան մէջ եւ կամ ա՛ն է միայն որ կը հասկցուի , կ'իւրացուի . եւ ասիկա է պատճառը որ այսօր , հրէշային ըլլալու աստիճան անիմաստ ոտանաւորներ կը վխտան ռուսահայ մամուլին մէջ : Շահագիւտանի եւ ժամանակակիցներուն ուղղութիւնը , թէեւ այսօր ալ դեռ կը նշմարուի քանի մը բանաստեղծներու քով , բայց կրնայ բոլորովին երեսէ թողուած նկատուիլ Անոնց ժամանակներէն ասդին , — բաղմաթիւ բանաստեղծներ երեւան եկած են , որոնք մանաւանդ միջավայրին անպահանջկոտութենէն քաշալերուած կը գրեն շարունակ , ու միշտ կը գնահատուին : Վերջին տասը տարիներուն մէջ այսպէսով ձանցցուած են Յ. Յովհաննէսեան , Ալեքսանդր Մատուրեան , Յարութիւն Թումանեան , Լեւոն Մանուէլեան , Ղազարեան , Դերենիկ Դէմիրճեան , Շանթ , Աւետիք Իսահակեան , Պետրոս Մոճռեանց , Յակոբ Յակոբեան , Բալուզեան , Արամ-Չարըգ , Ա. Կայծունի , Ավայեան եւ ուրիշներ , որոնցմէ իւրաքանչիւրը մասնաւոր հանդէսի մը կ'աշխատակցի ընդհանրապէս : Այս խումբէն , որչափ որ կը յիշեմ , Յ. Յովհաննէսեան հրատարակած է հատոր մը՝ 1887ին կամ 88ին , Թումանեան 90ին , եւ Մատուրեան ալ առաջին հատոր մը՝ 1891ին : Յովհաննէսեանը ասոնցմէ ամէնէն արժանաւորն է եւ սովորական բանաստեղծ մը չէ Ռուսահայոց համար : Իր ոտանաւորները նոյն իսկ դեռ այսօր պատուաւոր կերպով կրնան մրցիլ նորագոյններու

արտադրութեանց հետ եւ արուեստի տեսակէտով ալ մեծ մասամբ կրնան յաջողած կտորներ համարուիլ : Թումանեանի գործը աստիճանական անկում մըն է Յովհաննէսեանի բանաստեղծութիւններէն ետքը , իսկ Մատուրեանի քերթուածներուն առաջին հատորէն , միշտ քանի մը կտորներ են որ ընդհանուր տափակութենէ դուրս՝ տեսակ մը սիրունութիւն կը պահեն : Իսկ միւս բանաստեղծները , մասնաւոր հրատարակութիւններ չեն ըրած , — եթէ երբեք չեմ սխալիլ : Աւետիք Իսահակեանց միայն վերջերս ամփոփում մը հրատարակեց իր քերթուածներէն . հատորը բաւական քննադատուեցաւ հոն :

Այս պայմաններով կարելի չէ հիմակուց ըսել թէ ի՞նչ պիտի ըլլայ ռուսահայ բանաստեղծութեան ապագան : Մինչեւ հիմա , բանաստեղծութիւնը ընդհանրապէս անիմաստ ըմբռնումով մը արտայայտուած ըլլալուն ու նկատի առնելով մանաւանդ այն անհասկացողութիւնը , ինչպէս նաեւ դիւրին գնահատումը՝ որով կովկասահայ քննադատները կը վերաբերուին անոնց , բնական է որ լաւ ապագայ մը չպիտի կրնայինք գուշակել այդ մասին : Անգամ մը որ հասկացողութիւնը աւելի զարգանայ , ըմբռնումը շեշտուի ու քննադատները խստապահանջ ըլլան , անգամ մը որ Գաղափարին տրուածին եթէ ո՛չ հաւասար , գէթ կիսուն չափ տեղ տրուի Արուեստին ալ , դիւրաւ պիտի լաւանայ գրական այդ սեռը՝ որուն շատ ալ հետեւողներ կան իրենց մէջ :

Այս հարեւանցի տեսութիւնը վերջացնելէ առաջ , կ'ուզեմ երեւան հանել ռուսահայ բանաստեղծութեան մէկ կէտը՝ որուն ջերմապէս կը համակրիմ ու կը փափաքիմ մանաւանդ որ ամէնէն աւելի անիկա ունենայ իր հետեւողներն ու շարունակողները : Քանի մը բանաստեղծներ սկսած են գրել «Ժողովրդական մօտիւ»ներու վրայ եւ ընդհանրապէս սիրուն կտորներ հրատարակել այդ ուղղութեամբ , որ շատ օրինակելի է մեր տեղական բանաստեղծներուն համար ալ : Այդ կերպ բանաստեղծութիւնը՝ վերանորոգում մըն է ժողովրդական Վօքսիֆներու , — ռամկական երգեր , աշուղի երգեր , ու երգիծանքներ : Ռուսահայերը՝ Հիւսիսի գրականութեան ազդեցութեան տակ՝

աւելի կանուխ պէտք էին սկսիլ այս ուղղութեամբ արտադրելու , քանի որ մասնաւորաբար գերման բանաստեղծութեան այս դարուն չըջանը՝ իր սկիզբի տարիներուն մէջ ժողովրդական լիտեր ու պալլատներ կը պարունակէ մեծ մասամբ , ինչպէս նաեւ Միջին Դարու սիրերգներ՝ գրուած ժողովրդական թոն ու մը՝ տաղաչափութեան ժողովրդական օրէնքներով , որոնք նորոգուած , ճոխացուած եւ աւելի սիրուն ձեւով մը ու արտայայտութեամբ մը հրատարակուած են , առանց հիմնական ձեւին փոփոխման : Կէօթէ , Շիլլէր , Հայնէ , հատորներով արտադրած են անոնցմէ եւ այդ ուղղութիւնը կարծեմ իրենցմէ տարածուած է միւս գրականութեանց վրայ : Ռուսահայերը շատ ուշ կ'արթննան այս մասին . Ղազարոս Աղայանց , թէեւ տարիներ առաջ՝ Ադրիւրի մէջ սկսած է այդ ուղղութեամբ գրելու , եւ հրատարակած ալ բաւական թուով կտորներ՝ որոնք սքանչելի բանաստեղծութիւններ կը համարուին , բայց այսօր միայն որոշ հետեւողներ կ'ունենայ : Արդէն քանի մը գրողներ բաւական յաջողութիւններ ցոյց կու տան , ինչպէս Յովհաննէս Կոստանեանց՝ որ շատ սիրուն կտորներ հրատարակեց վերջերս Տարազի մէջ եւ Աւետիք Իսահակեանց՝ որուն «Արեւագաղի»ն մանաւանդ հիացումով կը յիշեմ կարդացած ըլլալս : Այս նոր ու սիրուն ուղղութիւնը շատ ուրախառթիւ է ուսանայ բանաստեղծեան ներկային համար , ու թերեւս ատոր մէջ ըլլայ միակ միջոցը որ ապագային կարենայ ազատիլ գինքը խեղդող ընդհանուր տափալութենէն :

Անցնինք Պ. Ծատուրեանի հատորին :

Բ .

Պ. Ալեքսանդր Ծատուրեան իր բանաստեղծութեանց առաջին հատորին մէջ , քանի մը քննադատներու կողմէ վեր հանուած թերութիւններ ունէր՝ զորս չէ ուղղած կրկին : Անկէ ի վեր մօտաւորապէս տասը տարի մը անցած է թէեւ , բայց ո՛ր եւ է աստիճանական լաւացում գծուար պիտի ըլլայ գտնել այս երկրորդ հատորին մէջ՝ որ ապագայութեամբ միայն կը տարբերի առաջինէն : Այն բոլոր թերութիւնները՝ զորս ուսանայ բա-

նաստեղծները ունին , յատկօրէն կը տեսնուին Պ. Ծատուրեանի քով ալ . ինքը՝ հարազատ զաւակ մըն է իր միջավայրին ու թերեւս ատոր իսկ պատճառաւ գնահատուած : Ոճի ճաշկապ ու ձանձրացուցիչ ըլլալու աստիճան միօրինակ գլուածքը , առօրեայ պարզ խօսակցութեամբ մաշած բառերու յարատեւ գործածութիւնը , նմանութեանց պակասը , եւլն . առաջին ակնարկով մը կ'երեւան իր հատորին մէջ : Ոչ նախշուն պատկերներ կան հոն՝ բանաստեղծի հոգեով յղացուած , ոչ երփնազեղ նկարումը՝ արուեստագէտի վրձինին : Ոտանաւորներուն մեծ մասը արձակի վիժում մըն է , ամբողջութեամբ առանց ներշնչումի գրուած . զգացումը , յոյզը , հոգին , վերջապէս բանաստեղծութեան ամէնէն էական տարրերը կը պակսին անոնց մէջ . գերազանցապէս տափակ արտադրութիւններ են յաճախ , որոնք ոչ յուզում կը պատճառեն եւ ոչ ալ գեղեցիկ ընթերցումի մը հաճոյք . քիչեր բռնի ծիծաղ մը կը խլեն , ու չկայ հատմը՝ որ թախիծի զգայնութիւնը տալով կարող ըլլայ պոետ մը արցունք քամելու : Ասոնց ամէնուն տեղ , ընդհակառակը ցուրտ բան մը կայ՝ շատ մը քերթուածներու մէջ , որ առաջին տողերէն իսկ կասեցնել կու տայ անոնց ընթերցումը : Ծարունակական ընթերցում մը արդէն անկարելի է այդ քերթուածներուն համար , որոնց մեծ մասին համադրութիւնը կարելի է նմանցնել երեւակայութիւնք ամէնէն տգեղ հրեշիս՝ որուն սակայն ամէնէն ալ սիրուն անունը արուած ըլլար :

* * *

Պ. Ծատուրեանի քերթուածներէն շատերը՝ ուսմանթիկ բանաստեղծութեան զրոյմը կը կրեն . ուսմանթիկ մը սակայն , որ խաթարեալ վիճակի մը մէջ երեւան կու գայ , կամ լաւ չհասկցուած եւ կամ գէշ արտայայտուած ըլլալուն պատճառաւ : Վիժած թիքեր ունի , որոնք աչքի զարնելիք հակադրութիւններ կը կազմեն իրարու , ինչպէս նաեւ Բարիի ու Չարի այլանդակ մարմնացումներ՝ աններդաշնակ յարդարանքով մը մէջ բերուած ու միշտ պատուելիլի ակնոցով դիտուած : Սեռը հին է արդէն եւ Պ. Ծա-

տութեանի բանաստեղծութեանց այդ մասն ալ հնագոյն :

Բայց ասիկա պարզ դարտուղութիւն մըն է միայն , ամէնէն հարեւանցի ընթերցումն իսկ երեւան պիտի հանէ սա պարագան՝ թէ հեղինակը ոչ մէկ դպրոցի կը պատկանի եւ թէ իր ոտանաւորներն ալ բանաստեղծական ոչ մէկ սեռի հպատակեցուցած է : Միօրինակութիւնը՝ գրուածքին , ոճին մէջն է միայն եւ ո՛չ թէ գաղափարներուն՝ որոնք տարօրինակ կերպով իրար կը հերքեն ամէն մէկ էջի մէջ : Կողքին վրայ , — սիրուն կողք մը ինքնին , ձիւնի ձերմակ գոյնով մը եւ տառերու ճաշակաւոր ընտրութեամբ , ինչ որ պատիւ կը բերէ հրատարակչին , — քառեակ մը կայ՝ զոր կարգացողը ծայրայեղ յոռետես մը , գրեթէ լալկան մը պիտի ենթադրէ գրողը :

Ծնուած հէգ երգիչ

Միշտ մոպլ տեսայ երկինքը զլիւի .

Ես շատ վաղ ուսայ տանգանքը կեանքի ,

Վաղ մտերմացաւ վըշտի հետ հոգիս :

Սակայն անձրեւէն ետքը արեւը չ'ուշանար եւ այդ լալկան տողերէն անմիջապէս անդին , նոյն իսկ առաջին ոտանաւորին մէջ՝ որ գիրքը կը բանայ , Պ. Ծատուրեան կը փոխուի յանկարծ . ու կեանքը՝ զոր այնչափ սեւ գոյներով տեսած էր քիչ առաջ , բնաւ ատելի չի գտներ . ընդհակառակը , անոր մէջ սիրունութիւն մը կ'ընդհնարէ , մինչեւ զայն ամէն բանէ աւելի հրապուրիչ , հմայիչ դարձնելու աստիճան : Երկրորդ ոտանաւորին մէջ ողբերն ալ կը մոռնայ բոլորովին , եւ նոյն իսկ չի հանդուրժէր որ լան գերեզմանի մը վրայ : Հակասութիւնը այս առաջին քերթուածներէն կը սկսի . կան դեռ շատ մը ոտանաւորներ՝ որոնք անհոգ սիրտ մը կը մատնեն , մինչդեռ ուրիշներու մէջ գերազանցապէս լալկան հոգի մը երեւան կ'ելլէ՝ որ Ուրերեւանինն ալ պիտի գերազանցէր : Այս վերջինները կը վխտան հատորին մէջ ու թրջուած բանաստեղծութեան յաւիտենական նիւթերուն վրայ հիւսուած են միշտ . վարդերին կորսնցնող պղպուտներ են օրինակի համար , եւ կամ միայնութեան մեկամաղձոտ ժամեր , ուրոնց միջոցին բանաստեղծը՝ « խորին հառա-

ջանքներով , սառն հայեացքներով , թախծալից սրտով , ու լալահայեաց՝ սրտին դարդերը զրոյց կ'անէ » գոռաւով :

Ո՛ր ես բաղցր բուն

Քունը՝ այս մասին շատ նիւթ մատակարարած է Պ. Ծատուրեանին . ուրիշ շատ քերթուածներ ալ անվերջանալի գանգատ մը ունին անքնութեան գէմ ու կոչ մը՝ միշտ Ուրիշոսին ուղղուած : Եւ այդ քունէն զատ , թախծոտ նիւթերը չէ որ կը պակսին գրքին մէջ . ամպեր կան յաճախ՝ անձրեւոտ օրուան սեւ ամպեր՝ որոնք տխուր մտածումներ կը ներշնչեն , առանց բնաւ իրենց յայրորդիք բաց օդն ու բիւ երկինքը զգայնելու , սրտի ցաւեր , սիրոյ վիշտեր , « ա՛խ » եր , « օ՛հ » եր , վերջապէս բացագոնչական բանաստեղծութեան մը բովանդակ գոհարները՝ որոնց արտասովոր փայլէն իսկոյն կը հասկցուի կեղծ ըլլալնին : Եւ սակայն , հակադրութիւն մը կայ որ միշտ աչքի առջեւ կը ցցուի : Լացերուն ծիծաղներ կը յաջորդեն , տխրութիւնը շուտ զուարթութեան կը փոխուի , ինչ որ մտածել կու տայ թէ Պ. Ծատուրեան գրչին եկածը թուղթի վրայ շարած է , առանց իսկ ինքզինքը հերքելու հասկնալու . Մարտի ամսն է կարծես , որ մէյ մը իր խորոտ կնկան կը վաղէ , մէյ մըն ալ խռպոտին :

Պ. Ծատուրեանի ծիծաղը սակայն , բըռնազրօսիկ բան մը ունի իր մէջ եւ արցունքներն ալ շատ անգամ սոխ քսուած աչքեր են որ կը ծորեն : Իր հատորին տխուր քերթուածներուն մէջ քիչ կատրոններ կան յաջողած , քիչեր՝ որոնց բանաստեղծին հոգին լմուած երեւայ . քիչեր որ յուզեն , ու տող առ տող , բառ առ բառ , գրեթէ վանկ առ վանկ զգալ տան բոլոր այն յոյզերը՝ որոնք կրնան զինքը խռոված ըլլալ իրապէս զգացուած վիշտի մը արտայայտութեան ու բաղձանքի մը եւ կամ տենչի մը իր մէջ ծնելու պահուն : Ներշնչումը՝ որ ամէն բանէ աւելի կը պոկսի Պ. Ծատուրեանի քով , կեանքն է բանաստեղծութեան . հոգին անով երեւան կ'ելլէ . զգալ պէտք է գրելէ առաջ , վայրկեան մը ապրիլ իր վշտին կամ անուրջին հետ , հասկնալ իր փափաքին , տենչին առարկան ,

ու ճանչնալ այն էակը՝ այն գաղափարը, կամ
այն անձանցով՝ զոր իր սէրով, իր պաշտու-
մով պիտի պարուրէ : Այսպէս հիւսուած է
Վէպլէնի Sagesse ք. « անիծուած բանաստեղ-
ծը » լացած է իր տաղերը գրած ատեն՝ որոնք
ակնհայտ ճիշդ մը չեն մատնէր բնաւ . անկա-
րելի է միսթիք մեղամաղձոտութեան այդ դե-
րագոյն հրաշակերտը կարգալ առանց թրջուած
աչքերու . տողեր կան՝ որոնք արցունքով կը
փղձկին, որոնցմէ լացը կը ժայթքի, եւ այն
սուտ, տափակ լացը չէ ան՝ ոչ ալ կեղծ վիշ-
տը . ճշմարիտ լացն է՝ սրտէն քամուած ար-
ցունքներով, եւ իրական վիշտը՝ տառապե-
լու ճակատագիրը կրող անկեղծ հոգիի մը :
Նոյնը չէ՞ նաեւ մեր Դուբրանին « Տրտունջ » ք-
ով չէ յուզուած կեանքի արշալոյսէն ինքզինքը
վերջալոյսին հանդէպ գտնող այդ երիտու-
սարդ հոգիին կարապի երգը կարգալով : Պ.
Մատուրեանի հատորին մէջ հատ մը միայն
կայ՝ « Հոգիս Մոռայ » ք. որուն մէջ բանաս-
տեղծէն քիչ մը բան գրուած ըլլայ . թախիծի
չեղտը խոր է հոն եւ անկեղծ են մանաւանդ
իր այն մաղձոտ խոկմունքները՝ զորս կ'ու-
նենայ փոթորկոտ ծովը դիտելով :

Հոգիս մռայլ, մռայլ իմ երգ,
էլ սիրտ չըկայ տանջուելու . . .
Դուրս եմ եկել ծովի եզերք,
Դարդս ծովին պատմելու . . .

Այ՛ ծով անեզր, այ՛ ծով անհուն,
Եւ դու յուզուած ու պղտոր,
Իմ տառապեալ, տանջուած հոգուն
Շահտ նման ես դու այսօր :

Ահա լսիր ինձ եւ ինձ հետ լաց,
Տո՛ւր վշտերիս պրծազանք,
Թո՛ղ ցաւերով մտերմացած՝
Մէկտեղ գտնենք սփոփանք . . .

Կամ Ընդ վիշտս քո վշտի հետ,
Որպէս բոյրեր երկուորեակ,
Արիքներում կորչեն անհետ,
Թաղուին պղտոր ջրին տակ . . .

* * *

Լալկան յոռետեսութեան տեսակէտէն
զուրա՝ առաջին թերութիւնը Պ. Մատուրեա-
նի հատորին մէջ սա է որ բազմաթիւ քերթ-
ուածներ հին, ծթաւած, աղճատած գաղա-

փարներ կը պարունակեն՝ պայմանադրական
անխուսափելի բացատրութիւններով արտա-
յայտուած եւ անեղի ըլլալու աստիճան տա-
փակ : « Գնա ցուրտ ձմեռ » ք զոր օրինակ,
որուն մէջ բանաստեղծը՝ ձիւնաբեր եղանակը
կը վանէ, առարկելով թէ « զգացմունք չու-
նի, կեանք չունի, հրապոյր չունի, ոչ ալ
ծիծաղ ու համբոյր » . այդ կտորին մէջ միշտ
ապուշ բաղձանքը երեւան կու գայ երազոտ
գարնան մը՝ որ զգացում պիտի բերէր, հրա-
պոյր տարտղնէր, ծիծաղ ու համբոյր հնչե-
ցնէր, նիւթ մը՝ որուն վրայ այնչափ ան-
գամներ գրած են բոլոր բանաստեղծները, ու
զպորոցականներն ալ անոնցմէ աւելի : Այդ
քերթուածէն ետքը մէջ պիտի բերեմ 1893ի
եւ 1897ի կաղանդին առթիւ գրուած երկու
ոտանաւորներ՝ որոնց պայմանադրական ոչ մէկ
բան կը պակսի . ո՛չ տաղտկալի մաղթանք-
ները, ո՛չ խօլ իղձերը, վառվռուն անուրջ-
ները, մահաշունչ ձմեռը, թոշնած վարդերը,
մէկ խօսքով բոլոր այլանդակութիւնները՝ զորս
միտքը կրնայ յղանալ : Յետոյ « Գիր » ք՝ որ
բանաստեղծական հատորէ մը աւելի մանկա-
կան քերականներու մէջ կրնայ դետեղուիլ
եւ ուր անեղի կերպով տափակ խրատներ
միայն կ'ուղղուին մանուկի մը՝ որ անկէ պի-
տի սորվի թէ « Գիր կարդալով գրքերում՝
չա՛տ նորանոր բաներ կ'իմանայ, » . . . պայ-
մանաւ անշուշտ որ ռուսահայ բանաստեղծի
մը հեղինակութիւնը չըլլայ կարգացած գիր-
քը : « Պանդուխտի երգեր » Նա ալ չեն պակ-
սիր հատորին մէջ, միշտ նման բոլոր պան-
դուխտի երգերուն եւ կամ բանաստեղծու-
թեան պանդուխտ երգերուն, գրեթէ միեւ-
նոյն բառերով ու կազմութեամբ : Կը
գտնուին նաեւ ափով տաղեր, — գէշ
արտայայտուած սիրոյ երգեր, — որոնց
մէջ սիրահարը կը պատմէ թէ իր սիրտը
միայն ունի աշխարհի վրայ, սիրտ մը՝ գանձէ
մըն ալ աւելի թանկագին, գոհարէ մըն ալ
յարգի՝ զոր միշտ պատրաստ է սիրուհիին նը-
ւիրելու . . . թերեւս բնաւ չունենալուն :
Ուրիշներ՝ ծովուն ու ժայռին անտարբերու-
թիւնը կը պատմեն, եւ կան՝ որոնց մէջ հրա-
շալի, mirifique գիւտը եղած է՝ երկինքին
կապոյտ ու վարդին ալ կարմիր ըլլալուն :

«Ձատիկ» մըն ալ գտայ հոն՝ որ ծթածու-
թեան կողմէ մեր Վերածնողին գրուած քներն
ալ կը գերազանցէ եւ որ միանգամայն հրա-
շակերտ մըն է ոտանաւորի այլանդակ կազ-
մութեան .

Ա՛խ, ի՞նչ սքանչելի վսեմ տեսարան .
Ահա բարձեալի սուրբ օթեւանում
խուռն բազմութիւն ծնկաչոք անձայն
կարծես մարմնացած մի ջերմ զգացում,
լուռ աղօթում է, եւայլն :

Ասոնցմով ալ մարդ կրնայ ուրեմն բա-
նաստեղծ համարուել կովկասի մէջ !

* * *

Դժբաղդաբար, Պ. Ծատուրեանի գրքին
մէջ լաւ արտադրութիւնները չեն որ ամէնէն
աւելի տեղ կը բռնեն . եւ ասիկա է պատճա-
ռը, որ տպագրութեամբ շատ սիրուն այդ
հատորէն՝ ամէնէն աւելի գէշ կողմեր են որ
մէջ բերելու կը պարտաւորիմ հոս : Խնամքի
պակասը ակնյայտի կ'երեւայ բոլոր քերթ-
ուածներուն՝ նոյն իսկ յաջողած քերթուած-
ներուն վրայ . յանգաւորութեան մանաւանդ
բնաւ հոգ տարուած չէ, անփոյթ բան մը
կայ ամէնուն մէջ ալ, գրչի մէկ հարուածով
արտադրելու ճիգ մը՝ որ սակայն շատ տգեղ
կտորներու զրուելուն պատճառ եղած է :
Հասարակ վերջաւորութիւններէ տարբեր
բան մը չկայ քերթուածներուն մէջ, որոնք
ընդհանրապէս նոյնաձեւ բառերու միօրինակ
յանգերով կը վերջանան՝ աններդաշնակ ա-
ռողանութիւն մը առնելով : Օրինակները չեն
պակսիր, ամէն մէկ էջի վրայ կարելի է
բուռնով գտնել անոնցմէ .

Ինձ ասում են . «Ձուր ես այդպէս ճիլ պոյէտ,
Օր ու գիշեր դու սէր երգում աշխարհին
Եւ ցաւատանջ ու տխրագին երգիդ հետ
Փառափանծում նաեւ սիրած քո ետրին : »

Եւ կամ՝

Պայծառ արեւը դեռ նոր ծագելիս,
Ձեզ ծունկ խոնարհած՝ ջերմ աղօթելիս, եւլն . .

Ուրիշ տեղ մը, չէ՛ թէ միայն յանգերը
աղքատ են, հապա քառեակը իր ամբողջու-
թեամբ անիմաստ բան մըն է որուն կարելի

չէ գոյութեան իրաւունքը խոստովանել թէ՛
իբր արուեստ եւ թէ՛ իբր գաղափար .

Որդեսէր մայրը խանդավառ կրծքին
Սեղմեց, փափայեց սիրած զաւակին .
Որդին ստացաւ օրհնութիւնը հօր
Քոյրը համբուրեց իւր սիրուն եղբոր :

Այս անիմաստութիւնը մանաւանդ երե-
ւան կ'ելլէ « Գիշեր » ին մէջ՝ ուր բանաս-
տեղծը՝ երկինքն ու ծովը զիտելով կ'ըսէ .

Եւ նայելով մերձ դէպի վեր
Եւ մերձ ծովի երեսին,
Օրհնում էի կեանք ու սէր,
Գիշեր, երկինք, ծով, լուսին . . .

Բոլոր ասոնք, բոլոր այս աններդաշնակ
կազմուածքը, շատ անգամ պատճառ կ'ըլլան
որ քիչ շատ սիրուն գաղափարներ եւ կամ
լաւ յղացուած պատկերներ բնաւ տպաւորու-
թիւն չթողուն ընթերցողին վրայ : Արտա-
յայտելու կարողութեան պակասը արդէն բա-
ցայայտ կերպով կ'երեւայ Պ. Ծատուրեանի
քով . յաճախ լաւ ներշնչումներ կ'ունենայ,
բայց ոտանաւորը միշտ ճապաղ դուրս կ'ելլէ,
օրինակի համար, առաջին անգամ ծովը տե-
սած ժամանակ ուրիշ բան չի գտնել ըսելիք,
եթէ ոչ անոր « կախարդիչ ու վսեմ » եղած
ըլլալը, թէեւ ասոր հակառակ՝ քերթուածը
կարգացողը կը զգայ իսկոյն որ ռանաստեղծը
ունի նաեւ ուրիշ բաներ ըսելիք, զորս մէկի
թողած է արտայայտել չկրնալուն համար .
քիչ մը խնամք սակայն, դիւրին կերպով
պիտի կրնար ատոր առաջը առնել : Եւ այդ
խնամքի պակասին ուղղակի պատճառով է որ
ոտանաւորներէն շատերը մեծ տարբերութիւն
մը չունին մեր տեղական տեքստին ներքին զորս
մարդ կրնայ մէկ շունչով կարդալ առանց
կանգ առնելու եւ առանց ալ անշուշտ ո՛ր եւ
է յոյզ մը զգալու : « Սերմնացան » ին վերջին
հատուածը, որ բաւական սիրուն է, ճիշտ
այդ միեւնոյն պատճառին համար փիղի մը
ձեռքով վրձնուած պատկերի մը կը նմանի
պարզապէս :

Պակասութեանց այս շարքին մէջ, մատ-
նանիչ կ'ընեմ նաեւ օտար բառերու կիրառ-
ութիւնը՝ յաճախ անճաշակ երեւոյթ մը կու տայ
քերթուածներուն . եւ ասիկա ալ մէկն է այն

գլխաւոր թերութիւններէն՝ որոնց պէտք է ամէնէն աւելի խնամք տանիլ :

* * *

Պ. Ծառուբեանի քով , ինչպէս կը տեսնուի , լաւ յատկութիւններ չկան . յատկութիւնը՝ ընդհանուր առումով , — այսինքն ու տանաւորին կազմուածքը , յանգեբու հարստութիւնը , գաղափարին գեղեցկութիւնը , պատկերներուն ճաշակաւորութիւնը , եւն . — չա՛տ երկրորդական մնացած է իր հատորին մէջ՝ ուր վիստացող գէշ կտորներու միջեւ հազիւ հազ քանի մը լաւ քերթուածներ տեղ գտած են : Ասոնցմէ մէկը մանաւանդ , որ ամէնէն յաջողածն է հատորին՝ աղուոր գոհար մը կ'երեւայ ինծի ու սա կարծիքը չինել կու տայ մանաւանդ , որ բանաստեղծը եթէ երբեք ուզէ՝ կրնայ իր տխրոտին աւելի արժանաւոր ոտանաւորներ արտադրել . այդ քերթուածը՝ զոր հոս մէջ կը բերեմ , « Լոյսեր եւ աչեր » ն է , ու տեսէք մանտաւանդ ի՞նչ ալ սիրուն :

Պարզ գիշեր էր : Ձեր տան կողքին
Մինակ նստած պարտիզում ,
Ես քեզ էի , հրեշտակ անգին ,
Ձերմ կարօտով սպասում :

Դու չը կայիր . . . տխուր , տրտում ,
Աչքս յառած դէպ ի վեր ,
Նայում էի — երկնի խորքում
Փայլում էին շատ Լոյսեր .

Բայց երկունս այլ Լոյսերից
Այնքան պայծառ , վառ էին ,
Որ քիչ մնաց՝ կախարդած ինձ ,
Քեզ իմ մտքից հանէին . . .

Յանկարծ հեռուից մի ձայն լսուեց ,
Թնդաց հոգիս սիրավառ ,
Տեսայ , ձեր տան դուռը բացուեց ,
Դու կամացուկ դուրս ելար .

Եւ նեղ շաւղով , մեղմ , յամբարայլ
Նկար , կողքիս նստեցիր ,
Եւ հուր աչերդ այդ լուսավայլ
Սիրով վերաս յառեցիր .

Վեզիդ փարած — լըռելային
Ես նայեցի երկնքին .
Այն զոյգ Լոյսերն էլ չը կային —
Նոցա տեսի քո դէմքին . . .

Թէեւ գաղափարը բոլորովին նոր չէ հոս , բայց կտորը կրնայ լաւ արտադրութիւն մը համարուիլ , մանաւանդ որ շատ ալ աղէկ արտայայտուած է : Դժբաղդաբար քանի մը հատ հազիւ կան հատորին մէջ՝ այդպէս յաջողած :

Պ. Ծառուբեան փորձած է նաեւ գրել ժողովրդական motifի վրայ , եւ արտադրած է աշուղի երգի հետեւողութիւն մը՝ որուն colorisն պահած է հաւատարմութեամբ .

Ախ , սեւաչիկ
Ձան հայ աղջիկ ,
Սեւ աչերիդ ես զուրան ,
Մտիկ արա ,
Որ իմ եարա
Սրտիս անես մի դարման :

Էշխիդ առած ,
Բլբուլ դառած ,
Գիշեր-ցերեկ քո սիրուն
Հն երգում եմ ,
Հն էրվում եմ ,
Ոչքիս կտրած անուշ քուն :

Ճամբէս քարոտ ,
Սիրտըս եարոտ ,
Էս աշխարհում վայնաչար
Քաշ եմ գալիս ,
Օրըս լալիս ,
Ղարիբ եմ իմ ու անճար :

Ո՛չ հէր ունիմ ,
Ո՛չ մէր ունիմ ,
Ո՛չ էլ մի սէր , սիրական .
Սրտիս սէրը ,
Մտքիս տէրը
Դու ես , մի իմ սիրական :

Բայց այս տեսակ հետեւողութեանց մէջ չի բաւեր միայն անաղաբառ պահել colorisն եւ հաւատարիմ մնալ անոր , հապա պէտք է աւելի նոր գաղափարներ արտայայտել ու պատկերներ հիւսել , առանց սակայն տոնը վտարելու . յետոյ , — ինչպէս ըսի արդէն , — պէտք է նոյն իսկ շատ տեղ փոխել ձեւը՝ եթէ երբեք պէտք ըլլայ , յղկել , կոկել՝ մինչեւ անոր լաւագոյն կազմութիւն մը տալու աստիճան : Մէջ բերած կտորիս մէջ Պ. Ծառուբեան ձեւը չէ կորսնցուցած , մինչդեռ կրնար փոխել ը ով յանգերը՝ որոնք ամէնէն տգեղ վերջաւորութիւնն են ո՛ր եւ է ոտանաւորի համար ու չա՛տ գործածուած աշուղնե-

րէն, եւ աւելի սիրուն ու արտայայտիչ նիւթ մը ընտրել փոխանակ այդ յաւիտենական սիրերգին՝ զոր ամէն աշուղ ծամծամած է քիչ չափ:

* * *

Ռուսահայոց նոր բանաստեղծներէն շատերուն պէս, Պ. Ծատուրեան ալ ազդուած է այն դպրոցէն զոր Շահազիզեան հաստատեց իր ժամանակակիցներուն հետ: Այս հատորին մէջ իւրացումներ կան անոնց գործերէն, որոնք սակայն չեն կրնար յաջողած կտորներ համարուիլ: Ծատուրեանի այս տեսակ ոտանաւորներուն եւ վերոյիշեալներու գործերուն մէջ կարելի չէ ժամանակագրական տարբերութիւն մը գտնել. միեւնոյն canvasesին վրայ բառերն ալ նոյնն են, գաղափարներն ալ: Նոր բան քիչ կայ արդէն այս հատորին մէջ եւ ինչ ձեւերու կրկնութիւնն է որ ամէնէն շատ աչքի կը զարնէ հոն: Այս տեսակէտով վերիններուն կիրարկած motifsներն որ ամէնէն աւելի կը գործածուին Պ. Ծատուրեանի կողմէ, բացատրելի կէտ մը ինքնին, քանի որ ծանօթ բան մըն է անոնց ունեցած ահագին ազդեցութիւնը Ռուսահայոց արդի սերունդին վրայ:

Այդ դպրոցին կիրարկած մէկ motifը մասնաւոր՝ որուն տեսակէն մենք «Կրամբամբուլի» ն ու «Բանթալոնիս կոճակը» միայն ունինք, յստակ կ'երեւայ երեք ոտանաւորներու մէջ՝ «Մեղայ քեզ Աստուած» ին եւ Գրչի հանաք ներու երկու կտորներուն՝ «Հայ քահանայ» ին եւ «Բարեգործին» մէջ, ուր սակայն Պ. Ծատուրեան կրցած է դրնել բաւական սուր գիտողութիւն մը եւ թեթեւ ալ հոգեբանութիւն մը՝ ուղղակի իր ներկարարելիք անձնաւորութեանց մասին: Հոս մէջ կը բերեմ «Հայ քահանայ» ն, ոտանաւորին արժէքէն աւելի՝ երեւան հանած ըլլալու համար սա պարագան թէ այդ երանելի մօրուսաւորները կողկասի մէջ ալ յաճախ անգիտակից մարդիկ են իրենց ասպարէզին, խաժաժի ձեւով չ'ընտելած քահանաներ պարզապէս:

Մանրամասնօր նա խանութ բացեց,
Ծախում էր ասեղ, կոճակ ու մատակ,
Բայց առեւտուրին խելքը չը պտակեց,
Փակեց խանութը, չունեցաւ վաստակ:

Նա շատ Թափառեց, դէս ու դէն ընկաւ,
Որ կեանքում իրան մի ապրուստ ճարի,
Բայց ի զմէր . . . ոչ մի բանի պէտք չ'ենկաւ —
Նա ամէն գործ էլ Թողում էր Թերի . . .

Վերջը ճարահատ, երբ տեսաւ, որ էլ
Մարդչի դառնալու յոյսն էլ է կորել,
Հայոց «այբուբէնն» նա անգիր արաւ
Եւ ազգի զըլխին քահանայ դառաւ . . .

Այս տեսակ ոտանաւորները շատ անորժով կը կարգացունին Ռուսահայերէն, ինչ կերպով ալ արտայայտուած ըլլան. եւ ասոր պէս նորերէն ալ շատեր բաւական արտադրութիւններ ունին միեւնոյն օրինակին վրայ: Ոտանաւորին ո՛չ կազմութիւնը, ոչ ալ յանգերուն աւելի կամ նուազ հարուստ ըլլալը կարեւորութիւն ունին այդ կտորներուն համար, ուր մէջ բերուելիք բովանդակ արուեստը կը կայանայ աղուոր բան մը ըսելուն եւ խընդացնելուն մէջ միայն:

* * *

Այն ութսուն ալլեւալլ ոտանաւորներէն ետքը՝ որոնք Պ. Ծատուրեանի բանաստեղծութեանց ինքնագիր մասը կը կազմեն, կան նաեւ յիսունի չափ ալ թարգմանութիւններ Հիւկոյէն, Պայրընէն, Հայնէն, Լոնկֆելտէն, Սիւլլի Բրիւտոմէն ու Մօրից Հարդմանէն, որոնց՝ հեղինակը առանձին մաս մը յատկացուցած է գրքին վերջը: Ու զիտելի պարագան սա է որ, Պ. Ծատուրեան ընդհանրապէս յաջողած է իր թարգմանութեանց մէջ, բնական է որ բնագրին որչափ հաւատարիմ մնացած ըլլալը չպիտի կրնայի հասկնալ, քանի որ անգլին գեղարուութիւն մը կար զանոնք գտնելու. բայց ինչ որ ալ ըլլան, Պ. Ծատուրեան անոնց մէջ շատ աւելի յաջողած է, թէ եւ միշտ պահելով յանգաւորութեան թերի կազմութիւնը որ կերպով մը պատճառ կ'ըլլայ իր անընդունակութեան մասին կասկածելու: Ահաւասիկ նմանողութիւններէն մէկը՝ որուն մէջ գաղափարը սիրուն ըլլալուն չափ ալ խոր է եւ զգացուած:

Մէկ մէկու հետ համարուելով, խաղալով,
Երկու ալիք ծովի երես բարձրացան,
Եւ երկուքն էլ լեցուն քնքուշ, մեղմ սիրով,
Դէպի ծովափ, բարձր եզերք սլացան:

« Երվի ափին քաղցր օրեր կը տեսնենք , —
խորհում էին ու երազում այիքներ .
« Այնտեղ խաղաղ ու անվրդով կը հանգչենք .
« Այնտեղ զգուած մենք եւ ցերեկ , եւ գիշեր
« Թաւ ստուերներում գտած հանգիստ օթեւան ,
« Եւ կը սիրենք , եւ կը տանջուենք անբաժան . . . »

Եւ այիքներն , որպէս մի զոյգ սիրահար ,
Թռան ծովափ , ինչ մի վտանգ չըզգալով ,
Բայց ծովափի կարծր կուրծքը խեղճերին
Փշրէց իսկոյն . . . փրփուր դարձրեց ծովային . . .

* * *

Պ. Ծառուրեանի հատորը աս է իր բոլոր
խկութեամբ . ինչ որ կրնար անկէ մէջ զեր-
ուիլ իբր լաւ ու գէշ յատկութիւն , առի այս


քննադատութեան մէջ , եւ եթէ հաւաքածոյի
մը մասին՝ ուր , ընդհանրապէս գէշ արա-
դրութիւններն են որոնք կ'երեւան , այսչափ
ծանրացայ , պատճառը սա է որ Պ. Ծառուր-
եան Ռուսահայոց արդի բանաստեղծներուն
մէջ մէկն է անոնցմէ՝ որոնք ամէնէն աւելի
ճանչցուած են ու շատ ալ համբաւուած : Ու
պէտք է զարմանալ ատոր վրայ . յաճախ՝ ինչ
որ բանաստեղծութեան մէջ մենք թերութիւն
մը կը համարինք , թերեւս ամենալաւ յատ-
կութիւն մը ընդունուի Կովկասահայոց կողմէ ,
ճիշտ այն ըմբռնումի տարբերութեան պատ-
ճառաւ , զոր բացատրեցի այս յօդուածին ներա-
ծութեան մէջ :

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

Լ Ր Ա Յ Ր Բ Ս Ո Ւ Թ Ո Յ

Հ Ո Ւ Ր Հ Ա Յ Ր Ա Ն

Խ Օ Ս Բ Ը Ն Դ Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ



Վ իմ Աստուածս , Արարչութիւնդ ալ հինցաւ .
Ես՝ երկինք մը՝ կը փոփոխես զիս յաւետ .
Երկրիս տօնին մէջ տանիս զիս ցաւէ ցաւ .
Եւ օր մ'երկնից տակ չը՝ պիտ' լամ փոքր իսկ կետ .
Արարչութիւնդ Էր չես փոխեր . ճի , հինցաւ :

Ցամաքք զրաւեն միեւնոյն տեղն յարածամ .
Նոյն շողն յաստեղց ամեն գիշեր հասնի մեզ .
Աքաղանդն յար ծանուցանէ զարքման ժամ .
Եւ ... խաչիս նոյն երկաթ բեւեռն յար գամես .
Նորաստեղծման՝ ճի՝ դեռ , չեկաւ , Տէր իմ , ժամ :

Նոյն ծաւալով բաւալ առնու միշտ արեւ .
Հիւժախտաւոր դեռ , չը մեռաւ լուսինն ալ .
Լոյս առձրձէ , շուք տարածէ միշտ տերեւ .
Այդ շուքն հոգւոյս մէջ հոսէ . հոն՝ հին շուքն ալ .
Նոր եղեցի մ , Աստուած , նոր լոյս , նոր արեւ :

Յերկնից յերկիր ելեւեջէ նոյն կաթիլ.
Մթնոլորտն է ճառագայթին միշտ ճամբան.
Այդ երկուքեն կաղմափրքքի միշտ Ասլիլ.
Այդ երկուքին ալ անըզգայ է ... տապան.
Նոր աշխարհի մը մէջ տուր ինձ, Տէր, ապրիլ:

Մայիսն երկնից բերէր վարդեր բոցավառ.
Մեղըր նուագէր՝ վարդին փերմկ՝ ժիր մեղուն.
Բուրէր բիթեռն, օղայածիկ՝ ճի՛ բուրվառ,
Բուրմամբ հրգօր՝ որ տայր աջացս մահուան քուն.
Վերածնէի ... բռնուն, Տէր, խնայդ ինձի բառ:

Հրրաշալիք՝ տիեզերքն ողջոյն, արդարեւ.
Բայց մենք հրրաշք, նորոգ կեանք մենք կ'ուզենք, Տէր.
Հերանոսներն ալ պաշտեցին այդ արեւ.
Սուրբ արեգակ մը մեր գլխուն վրայ ծագէր.
Թող ծակծրկէ մարմինս, այլ քոյդ ըլլայ 'րեւ:

Ըզգայարանք մեր բրբացան այս գեղոյն.
Մաշցաւ ինքն ալ ափնամաշն ովկեան.
Բշնաւ հոգւոյս չը բարբառիք արուեստն Յոյն.
Ծով և արուեստ աղաղակէն նորոգ կեան.
Ո՛ւր խաչիդ տակ փրքած արուեստն այն անհուն:

Տէր ... ան, Տէր իմ, մարմին՝ ըզգեստ մոռ նորէն.
Նոր աշխարհ մը ստեղծել եկնուր աջքիս տակ:
Խրմորն հատաւ Արարչութեան. սէր վերէն.
Մէր բեր, Իջնենք քեզ հետ անդունդն անյատմկ.
Հոն է կուտած խաչիդ սուրբ մութն՝ որ գօրէն:

Մեր քաղաքաց կեղծ լոյսք, ըշպարք, ջանք պարուց
Մոռցուցին մեզ գեղն ու շող սուրբ բրնութեան,
Զոր խաչիդ սեւն հրաշապայծառ, ցայտեցուց,
Յօտմը յարկաց մեր խուսափուկ, ապաստան
Հոն կենսատու Սեւն որոնեց — մէջ ալուց:

Այո, վրձնէն պիտի հանես աշխարհ նոր ...
Հայհոյեցի, Աստուած, ներք. ներդաշնակ
Եւ մըշտանոր է տիեզերքդ այեւոր.
Հրրաշաձայն նա քիւրամատն է դաշնակ. —
Զմեզ անլըսող ըրաւ դարուն մեր ժըխոր: —

Զմեզ անտարրեր կամ անըզգայ բուն գեղոյն
Ըրաւ արուեստ մը նիթապաշտ և ըստրուկ.
Ե՛կ, անդընդոց խորն անսահման կայ գաղտ բոյն.
Հոն քրիստոնեայ բոլոր վըսեմ ներշնչմունք,
Խաչիդ բեւոց ներքեւ ծընած ըլլը բռնուն:

Մի՛ ծնունդ ըլլար այս հեղ, Տէր իմ, տուր ծընունդ.
Խանձարուրիդ համար չը կայ սուրբ մըսուր.
Մոգաց շըբթունք չեն յեղյեղեր ալ անունդ.
Մըկըրտութեանդ համար կաթիլ մ'անգամ ջուր,
Սուրբ ջուր, առուակ սուրբ, վանճ, չը կայ ... Սեւ անդունդ,

Անդունդն առաւ պահեց ինչ որ մեզ տըւիր.
Արցունքդ, արիւնդ, հին քուրձդ ունոր պատուիրանդ.
Արծաթ խաչեր շնտ, Այլ սէւ խաչդ, արհաւիր,
Ահն Աստուծոյ, սէր նրմանեաց, սուրբ եռանդ,
Անդրնդոց խորն են, Տէր, ինչ որ մեզ տըւիր.

Ե՛կ, ելնենք հոն, Հանենք ի լոյս արեգին
Ի՛նչ որ կորոյս անմըտութիւնն ... իմաստնոց,
Թոյլ պիտի տաս որ ի խոր անդրը վընին
Քու ետեւէդ իջնեմ, բարձանց Տէր՝ խորոց, —
Ձի ետեւէդ գիս Գողգորթա հանեցին

Մարդ չը ծընիր քրքիստոնեայ, Տէր. կ'ըլլայ,
Խաչիդ ճամբան, խիճն ընդ ոտիւք, ճակտին փուշ,
Ատոնք ըզմարդ, ատոնք միայն քրքիստոնեայ
Կ'ընեն, Գալու զնետ Քո ի լոյս կամ մըշուշ
Պատրաստ եմ և ... արժանի — ո՛ր ալ ըլլայ.

Ոսկեղջիւր, 17 Ապրիլ 1895

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԼԵՒՈՆ ՍԵՂԲՈՍԵԱՆ

Ժ.



ԱՆՁԻ ու թուխ ամ-
պերը առեր էին եր-
կինքը. Եւ իրիկունը
թէեւ ախքան ուշ չէր
դեռ, բայց պարտէզը.

Ժառերուն տակ մութի նուրբ քօղ մը տարած-
ուած էր արդէն ամպերէն ծորող, մանաւանդ
հսկայ չինարի երկար ու խիտ ոստերուն
ներքեւ.

Հո՛ւտ, ճի՛շտ ծառի բունին կից, լայն
գորգի մը վրայ ծալապատիկ կուշ էր եկեր
պառաւը, ու հնար եղածին չափ ինքն իր

վրայ կը քած՝ ձեռքի խաղի-թուղթերը կա-
նոնաւոր տողերով իրարու տակ կը շարէր,
դանդա՛ղ, լո՛ւռ, լո՛ւրջ, խորհրդաւո՛ր, ու
թեթեւ մը դողացող ձեռքով.

Թուղթ կը բանար.

Իր աջ կողմը ամբողջ հասակովը դէմքին
վրայ փուեր էր Հրանտ, եւ թեւ ու կրծքով
բարձի մը մէջ խրած՝ ուշադիր կը հետեւէր
մօրը ձեռքերուն.

—Նայէ՛, բազըը նորէն թեւիդ տակը
ինկաւ. նկատեց կինը նոր բացած թուղթը
մատնանիչ ընելով, Բաղդաւո՛ր տղաս. մի-
նակ գլխուդ վրայ քիչ մը նեղութիւն կայ.
ատ աղւոր չէ՛. մէկ ալ չեմ հասկընար սա
երկու շէկերը քեզմէ ի՞նչ կ'ուզեն, սա շէկ
մարդը ու սա շէկ կինը, որ ձախ կողմէդ չի
հեռանար. շէկերէն զգուշ եղի՛ր, մա՛նչս,
մանաւանդ շէկ կիներէն. ամէն կնկան ա-
կանջ մի՛ կախեր, Աստուած պահէ քեզի ա-
նոնց փորձանքէն.

Հրանտ ժպտեցաւ, շատ աղէկ կը հաս-
կընար մօրը ակնարկները.

—Իսկ ճամբորդելու մասին ոչինչ չե՛ն
ըսեր թուղթերդ, հարցուց յանկարծ.

— Ի՞նչ ճամբորդել . դարձաւ կինը զաւկին՝ չե՛շտ անոր դէմքին գամելով աչքերը :

— Նա՛, չգիտե՞ս . դէպի շէկերու աշխարհը :

— Ձէ՛ որ դեռ երկու-երեք ամիս ժամանակ ունիմ կ'ըսէիր :

— Այո՛ . բայց , է՛ , ո՞վ գիտէ . գործեր կրնան պատահիր , անհնկալ պատահարներ . մարդ կ'ըստիպուի շտապելու . . .

Կմկմաց տղան երկմիտ , բայց նշմարելով , որ մայրը անհանգստանալու սկսաւ , իսկոյն փոխեց թոնը .

— Իմ հարցուցածս ալ այդ է միայն , մայրիկ . կ'ուզէի գիտնամ , տեսնենք , թուղթերդ ի՞նչ կ'ըսեն :

— Ճամբա՛դ , ճամբադ դեռ շատ հեռու է . տե՛ս շարքի միւս ծայրը : Ըսաւ կինը հաստատ ու վճռական :

— Հա՞ . ուրեմն ադէ՛կ :

Պառաւր շարելը աւարտեց . երկու ձեռքերը իրարու վրայ գոգը դրած՝ պահ մը լուռ սկսաւ դիտել խորին ուշադրութեամբ առջեւը փռած թուղթերուն գաղտնիքը , եւ քիչ մը վերջը սկսաւ նորէն մեկնել հատիկ-հատիկ :

— Ինչպէս ըսի գլխուդ վերի զին շատ մտմտուք կայ . մտմտուքը սիրտ կը մաշէ , ճահիլի բան չէ . եւ այդ մտմտուքն ալ , նայէ՛ , վրայ հեռուներէն կու գայ . ա՛խ , եթէ այդ հեռուներէն անգամ մը ձեռք վերցնէիր : Ուրիշ բան մըն ալ , որ չեմ հաւնիր , տե՛ս , չորս դիտ բոլոր ուրիշ գոյնի թուղթերն . կարծես օտար , պաղ չրջանակի մը մէջ , որ քու գոյնիդ չի յարմարիր :

— Է՛ , ի՛նչ վնաս , մայրիկ . աւելի աղէկ . զանազան գոյներ իրարու քով աւելի սիրուն կ'երեւայ :

— Կ'երեւայ , այո՛ : Ա՛խ , զաւա՛կս , մի՛ խաբուիր . մարդ իր չրջանակէն դուրս գալու չէ : Երջանիկը ա՛ն է , ով իր գոյնի մարդոց հետ իրեն սովորական չրջանակին մէջը կը դառնայ : Իր չրջանակէն դուրս շատ բան սիրուն կրնայ երեւար , միայն , հաւատա՛ , ո՛չ իրեն համար : Ամէն մարդ իր գոյնին մէջ :

Հրանտ , որ մինչեւ հիմա անփոյթ ժամանցի համար միայն կը լսէր մօրը , վերջին խօսքերուն ակամայ բարձրացաւ քիչ մը բար-

ձէն , ու աչքերը յամառ սեւեռեց մօրը հանդարտ ու տխուր դէմքին , ուր վշտերն ու անցեալը յարմարելու ու համակերպելու անջինջ դրոշմը զարկեր էին :

Առանց որդուն շարժմանը մասնաւոր ուշք դարձնելու՝ կը շարունակէր ան իր գուշակութիւնները , որը աւելի իր սրտէն , քան թուղթերէն կը կարդար : Բայց Հրանտ ալ չէր լսեր ոչինչ :

Ամպերու ու ծառի խորհրդաւոր կէսմութին տակ , շուրջի գաղջ ու ճնշող օդի լռութեան մէջէն մօրը հասու , յատակ ու տրտում շեշտերը պատգամի մը պէս իր ուղեղն էր թափանձեր :

« Երջանիկը ա՛ն է , ով իր գոյնի մարդոց հետ , իրեն սովոր չրջանակին մէջը կը դառնայ . . . » :

Շը՛չչ . տաք հովը , յարձակեցաւ յանկարծ ծառի թաւ ճիւղերուն մէջ , ու կիսաչոր , դեղնակարմիր տերեւներու անձրեւ մը տեղաց վար . քանի մը հատը երերտըկալով ու դողդոջ եկան նստեցան թուղթերուն վրայ , հատ մըն ալ պառաւի քթան մագերուն :

Հրանտ ցատկեց ստքի :

— Մայրի՛կ , լաւ է ներս երթանք , կարծես փոթորիկը փրթի պիտի :

— Գնա՛ , Մարիամը ինծի զրկէ , տա լաւ թերը ժողվենք . պատասխանեց կինը՝ անդին երկար պարանի մը վրայ փռած ձերմակեղէն . ներք մատնանիչ ընելով :

Հրանտ կատարեց մօրը պահանջը . ծանր ու մտախոհ բարձրացաւ դէպի աշխատանոցը , ուր վերջին ժամանակները շատ քիչ էր եղած . այն ալ միշտ պատահաբար՝ առանց աշխատելու :

Ու սեմին վրայ կանդ առաւ վայրկեան մը , բոլորովին թաղուած իր մտածումներուն մէջ :

« Այդ չրջանակէն դուրս շատ բան կրնայ սիրուն լինիր , միայն ուրիշներու համար , ո՛չ իրեն . . . » :

Եւ ինքը խենթ մը , որ կարծիք էր թէ ինքն ալ իրաւունք ունի ուրիշ բնաւորութեան մարդոց ուրախութիւնները ունենալու : Ինքը լուրջ գիտութիւններու նւիրած աշխատաւոր մը , ինչ կը յարմարէր իր զգացում-

ներուն ելլել սիրահարիլ տասնըութ տարեկան պատանիի մը պէս , այն ալ Մինէի նման արուեստագէտի անկայուն ու թռուցիկ բնաւորութեան տէր աղջկան մը վրայ , Յիմարութիւն էր , այո՛ . իսկ յիմարութիւնը վայելել գիտնալն ալ ամէն մարդու բան չէ : Ամէն մարդ ի՛ր գոյնին համեմատ , ի՛ր շրջանակին մէջ . . .

Ու երկու դանդաղ , վարանոտ քայլով մտաւ այդ շրջանակէն ներս . մօտեցաւ գրասեղանին , յենեցաւ թեթեւ մը ու կեցաւ :

Փոքրիկ պնակի մը մէջ պատրաստած գունաւոր յեղուկը ցամքեր էր բոլորովին . խեցի կտորին վրայ պրկւած թաղանթը չորցիր ու կծկւեր , ու նուրբ ապակիները թափւած էին շուրջը աղտոտ , ոմանք պինդ իրարու փակած , իրենց մէջ ճզմելով կակիի չորցած փսոր մը . եւ այդ բոլորի կեդրոնը մանրադիտակը , որու վրայ փոշիի բարակ խաւ մը նստեր էր :

Տղան յանկարծ ցաւի , խղճի խայթի պէս բան մը դպաց . այդպէս մոռնալ , այդպէս լքել իր ջանքերուն աշխատակիցը , իր ձեռնամենքերուն հաւատարիմ օգնականը , իր ընկերը . . .

Բռն թափով մը դուրս քաշեց գրպանէն թաշկինակը , աարօրինակ ակնածանքով մը վերցուց , սկսաւ մաքրել դործիքը , ու տեսակ մը գուրգուրանքով դրաւ նորէն , ըզգու՛ սեղանին վրայ :

Նոյն եռանդով ալ սկսաւ արագ մաքրել ու քիչ մը կարգի բերել շուրջը : Վերցուց գրքերէն մէկը , բացաւ նշան դրած երեսը : Վերջը ծոցեցաւ իր կէսը գրւած , կէսը նկարւած ձեռագիրներուն , ջանալով յիշել , թէ ուր էր իր աշխատանքը ընդհատեր :

Եւ զգաց , որ վառ հաճոյք մը մէջը շրջան առնել սկսաւ . հաճոյք մը աշխատելու կարօտին , հաճոյք մը աշխատելու կարողութեան , Ո՛վ ըսաւ , թէ ինքը այլեւս աշխատելու չնորճ է չունէր . ո՛վ ըսաւ որ իր սրտի անխորհուրդ ու անհետեւանք զգացումներուն ձեռքը կապուած ստրուկ էր :

Պէտք էր փեթուտել այդ ոսկի անմիտ շըղթաները , որոնք որչափ ձիգ տաս , այնքան մարմնիդ մէջը կը խրին . պէտք էր թափ տալ իր ուսերէն , ամբողջ անիմաստ պատմութիւն

ներ : Յնցընեցաւ . Արագ վազեց դուրս , թարմ ջուր բերաւ , փոխադրէն մէկուն շիշը մօտ քաշեց , շարեց իրարու քով պէտքի անեղներն ու գործիքները , մաքրեց մէկ երկու փորձի ապակիկ , թարմ փրէփարագ պատրաստել կ'ուզէր :

Ու ինքն իր ոգեւորութենէն ուրախացած՝ սկսաւ սուլել : . . . Սակայն սոյլը ընդհատեցաւ յանկարծ , ընդհատեցան ակնթարթ մը եւ սրտին զարկերը . ձեռքը շիշին՝ քայքայած մնաց . ճանչցած էր վարէն Մինէին ձայնը :

Սանդուղը թփռուտաց հապճեպ ու թեթեւ քայլերու տակ , ու աղջիկը հեւալով սեմէն ներս :

— Բարե՛ւ :

Տղան յամառ , անթարթ աչքերով կը նայէր անոր . ո՛չ բառ մը , ո՛չ շարժում :

— Բարե՛ւ . չե՞ս լսեր . երեւի , այս ալ նորագոյն քաղաքավարութիւնն է :

— Ի՞նչ գործ ունիս հոս . հարցուց վերջապէս , տղան կըտրուկ խեղդւած ձայնով մը :

— Այդ ի՞նչ անխելք հարցում է . խնդաց Մինէ . քայլ մը ետ գնաց . բազուկները դրաւ աթոռի մը թիկունքին , կուրծքն ալ վերան ու գլխարկի զարդերուն տակէն ինքն ալ լուրջ հայեացք մը շինեց . դիտմամբ տըղուն ձեւովը , տղուն նման :

Հրանտ աչքերը փախցուց . ձեռքի փոքրիկ ունեկին զայրոյթով նետեց սեղանին վրայ , ու մէկէն գիմեց խօսակցին :

— Գիտե՛մ , եկար նորէն աշխատութիւնս խանգարելու . ինծի նայէ՛ , հերի՛ք է . դուն ու ես տարբեր գոյնի մարդիկ ենք . դուն ինծի ոչինչ տալ չե՛ս կրնար , գոնէ ունեցածս ձեռքէս խելու չի՛ հետապնդիր , հանգիստ թող ինծի իմ շրջանակիս մէջ . ես քեզմէ ա՛լ ուրիշ ոչինչ չեմ սպասեր :

— Հրա՛նտ , չե՞ս ամէնար . ամօ՛թ քեզի : Միթէ իրա՞ւ չես ըմբռներ որ վարմունքդ կատարեալ երեխայական է . ահագին մարդ պիտի լինիս . ա՛յն ալ տօքթօր , ա՛յն ալ մասնագէտ , ա՛յն ալ ջղային կեդրոնի . . .

Խօսքին հեա հետզհետէ թեւերն ու կուրծքը բարձրացուց աթոռի թիկունքէն , եւ ամբողջ հասակովը շտկուեցաւ .

— Իսկ ե՛ս , ես կ'ամչնամ . դեռ աւելին , այդ բոլոր յիմարութիւնները ինծի ուղղակի կը նւատացնէ . կըմբռնե՛ս , կը նւատացնէ : Մենք չէնք—չնորհք կը վախնանք իրարմէ ու կը փախչինք . եւ ինչո՞ւ . որովհետեւ կը համակրինք իրարու , իրար կը հասկնանք , մէկ մէկու սիրտ տալ ու իրարու մօտիկութենէ օգտուիլ կրնանք , մանաւանդ մեր այս տափակ չրջապատին մէջ . Լսէ՛ , ես ալ չե՛մ կրնար հանդուրժեր , որ մենք իրարմէ խոյս տանք , որ երեսիս նետես , թէ ես կը խանգարեմ քեզի : Ո՛չ , ո՛չ թէ քեզի խանգարել , այլ քու աշխատութեանդ թեւ տալ կ'ուզեմ ես . կ'ուզեմ որ իմ մօտիկութիւնս ու զգացումներս քու օգնականդ լինի , դրդիչդ , քու մուսադ : Ա՛խ , դուն իրաւ մուսայի հետ գործ չունիս . նա՛ , ի՞նչպէս կ'ըսեն ձեր բնախօսական ժարկոյով :

Ու ժպտող աչքերուն՝ գլուխը քիչ մը ծռած մօտ եկաւ տղուն :

— Բայց , Մինէ՛ , սիրելի՛ս . . .

Հազիւ էր տղան բերանը՝ բացեր , որ աղջկան ձեռքը բարձրացաւ իսկոյն ու ափովը գոցեց անոր շրթունքները :

— Ո՛չ Մինէ , ո՛չ սիրելիս . ո՛չ մէկ առարկութիւն . վերջացա՛ւ . ալ ո՛չ մէկ խօսք այդ բոլորի մասին . կը հասկնա՞ս . Դէ՛ , հիմա ինծի ըսէ՛ նայիմ , ի՞նչ կ'ընես հօտ , դուն հանգիստ քու գործդ շարունակէ . ա՛յ , ես ալ քեզի կ'օգնեմ . կը կարծես չե՛մ կրնար . դուն ցո՛յց տուր մինակ , թէ ինչ պիտի ընեմ :

Հրեց աթոռը գրասեղանին առջեւ , նրստեցաւ , մանրադիտակը քաշեց իրեն ու ծռեցաւ վրան :

— Հապա ոչինչ չե՛րեւար մէջը . բացականչեց յանկարծ խնդում—երես՝ տղուն դառնալով :

Հրանտ ստիպուեցաւ ժպտելու՝ այնքան միամիտ էր այդ բացականչութիւնը :

— Դէ՛ , ի հարկէ , եթէ տակը տեսնելու առարկայ չի կայ . կեցի՛ր , պատրաստներէն քեզի բան մը ցոյց տա՛մ :

Մօտը խոշոր տուփ մը բանալով՝ արդէն պատրաստ , փակցուցած հին նիւթերէն ապակիկ մը դատեց , անցուց մանրադիտակին տակ , ու գործիքի պտուտակը բռնելով ծռեցաւ խողովակին վրայ՝ տեսողութեան ամէնէն պայծառ դիրքը բերելու :

Աղջիկն ալ նորէն ծռեցաւ քիչ մը , Հըրանտ նախ անոր ուսը թեթեւ մը իր ուսին վրայ զգաց , վերջը աղջկան գլխարկին փետուրը որ իր մագերուն քսուեցաւ , եւ աղջկայ գանգուրներէն ոլոր մը , որ իր ճակտին ինկաւ : Տղու պտուտակը կառավարող ձեռքը դողաց , պատկերը փախաւ խողովակին մէջէն . Հրանտ խածաւ շրթունքը , գլուխը քիչ մըն ալ թեքեց իր կամքին հակառակ . ու երկուքի այրող այտերն ալ արդէն իրարու էին փակած պինդ . . .

Վայրկեան մը միայն :

Հրանտ ետ քաշուեցաւ յանկարծ , բռնուցքը զայրացկոտ զարկաւ սեղանին ու հեռացաւ երկու քայլ :

— Ահա՛ այդ բոլոր սիրուն յիշատակներու եզրակացութիւնը : Սիրուն բառերով մենք իրարու ճանկէ չենք աղատիր , պարագայ բան է պէտք է ամէնէն՝ գործնականն ու կտրուկ միջոցին դիմել . ես նոյն իսկ այս չաբժու կը մեկնիմ Գերմանիա . արդէն այսչափ կադուրելի՛ն ալ հերիք է :

Եւ « կազդուրելի » մասնաւորապէս չեւտուած էր :

Մինէ գլուխը վար կախած՝ գրքի մը թերթերը կը դարձնէր ջղացկօրէն . երբ տեղան լոեց , առանց իր դիրքը փոխելու հարցուց հատուկ չեչուով մը .

— Որոշումդ հաստատ է :

— Այո՛ , այո՛ :

— Ուրեմն ըսէ պատրաստութիւն տեսնեմ :

— Ի՞նչ պատրաստութիւն :

Մինէ աթոռին վրայ կէս մը դարձաւ դէպի ան . ու յստակ , հանգիստ թօնով մը կցեց :

— Ճամբորդելու , քեզի՛ հետ ,

— Է՛ , թո՛ղ անհամ կատակներդ մեկդի . ես այլեւս ամենեւին սիրտ չունիմ կատակելու , եւ եթէ ակընթարթ մը իմ հոգեկան վիճակս մտնել կարողանայիր , դուն ալ կը կորսնցնէիր կատակելու ցանկութիւնդ :

— Ես չեմ կատակեր . եղաւ աղջկան կարծ ու լուրջ պատասխանը :

Հրանտ զարմանքով անոր նայեցաւ չեչու : Աղջիկը իր բոլոր ուժովը սեղանին մէկ սուր անկիւնը սեղմած ու զսպած իր շնջառու

թիւնը՝ տղուն կը նայէր անկեղծ ու պայծառ հայեացքով :

— Մինէ՛ . ըսաւ վերջապէս տղան : Եթէ միտքդ խաղի ելլել չէ , հաւատա՛ , որ ինքզինքդ կը խաբես : Հետո չե՛ս գար դուն . չե՛ս կրնար գար . այդ երազէն արդէն արթնցած եմ ես վերջնականապէս : Մենք իրարու մէ՛կ բանով միայն կրնանք օգնել . նար եղածին չափ կտրուկ անջատուիլ իրարմէ :

Մինէ կապւած շարժումով , կամաց մը բարձրացաւ ակունքէն . ձեռքը դեռ սեղանին՝ լիփ-լիտակ կեցաւ տղուն դէմ , ու իր այդ անսովոր ծանր ու լուրջ խօսուածքով պատահանեց :

— Կը կարծե՞ս : Սակայն գիտցի՛ր որ քու բոլոր ջլային կեդրոններուդ հետ միասին չա՛տ ձախորդ հոգեբան ես : Կը կրկնե՛մ քեզի . կ'ուզե՞ս այս վայրկեանիս ճամբայ ելլենք . կ'ուզես մինչեւ Գերմանիա , կ'ուզե՞ս մինչեւ դո՛խք :

Դէմքի , դիրքի ու ձայնի այդ լրջութեան ու վճռականութեան դէմ տղու զարմանքը իր դադաթնակէտին հասաւ . յանկարծ իր կամքին հակառակ նոր յոյս մը պլպլաց սրտին մէջ . պլպլաց ու իսկոյն մարեցաւ . ու Հըրանտ լեղի փպիտով մը կցեց :

— Իսկ դերասանութի՛ւնդ . երեւի այսօր տունն ես մոռցեր :

— Թո՛ղ . բացականչեց աղջիկը ակռաներուն մէջէն .

Ու մինչեւ հիմա , զսպած զգացումներուն ու ձայնին մէկէն ազատ ընթացք տալով՝ նետուեցաւ դէմքը հրահրած , բռնն շարժումներով ու խօսուածքը մոլեգնոտ :

— Դերասան , դերասան , ո՛ր կողմ դառնամ միեւնոյն բառը երեսիս կը նետեն . ու թիւները ամենքը մարդ են , զգացումներ ու ինչ , կ'ապրին , իսկ ես միայն դերասան , միշտ , ամէն տեղ , ամէնքի համար . ո՛վ ըսաւ . ո՛վ ըսաւ քեզի , որ իմ մէջս բնուած թիւնը մեռեր է , որ արուեստ է միայն մէջս , որ այդ արուեստին ամէն բան զոհեմ պիտի . ա՛ , ծիծաղելի՛ , արդէն պէտք եղածէն աւելին ես զոհած եմ անոր . իմ երիտասարդութիւնս , իմ թա՛րմ երիտասարդութիւնս , եւ փոխարէնը ի՞նչ է տւած ան ինծի :

Դողդողացող լանջովը խոր շունչ մը առաւ :

— Լսէ՛ . շուտով քսանըվեց տարեկան կը լինիմ . եւ մինչեւ հիմա ես չեմ գիտցած թէ ի՞նչ բան է սէրը , թէեւ բեմին վրայ շարունակ նոյն զգացումն է , որ ներկայացուցած եմ ուրիշներու քէֆին համար . ուրիշներու , միշտ ուրիշներու . իսկ ինքզինքիս , իմ սեփական պահանջներուս համար՝ ոչինչ , Դուն չե՛ս կրնար երազեր անգամ , թէ ի՞նչ հրայրք , ի՞նչ ծարաւ ունիմ սիրելու՛ , մինչ չըջապատողներս կա՛մ ապուշ հաճոյախօսութիւններ են շռայլած ինծի , կա՛մ լկտի նայուածքներ քուլիսներուն ետեւը , պոտուտարիս դրան մէջ . ի հարկէ՛ . չէ՛մ որ դերասանուհի եմ . հաճոյքի , զուարճութեան առարկայ մը . խաղալի՛ք մը՝ բեմի վրան բոլորի համար , բեմին ետեւը մէկ-երկու մասնաւորներու . ֆո՛ղ , այդ գարշելի դէմքերը , այդ հայլատ նայուածքները . ահա՛ ի՞նչ տեսակ սէր են առաջարկած ինծի , ի՞նչ տեսակ սիրով են հալածած ետեւէս , փողոցէ փողոց , բառիս բռնն նըշանակութեամբ :

Ու զգուանքի ծամածռութիւն մը դէմքին՝ դադար առաւ նորէն շնչառութիւնը կանոնաւորելու :

— Հրա՛նտ , ես ապրի՛լ կ'ուզեմ . ապրի՛լ քիչ մըն ալ ինծի համար , ապրի՛լ իմ տենչացած յուզումներովս : Մտի՛կ ըրէ , դեռ ո՛չ մէկ տղայ չէ մօտեցած ինծի քու զգացումներուդ այդ մաքրութեամբը , քու մտածման եղանակիդ այդ ազնուութեամբը , ուժովդ . ես ո՛չ մէկ տղու դէմ չեմ զգացած այն , ինչ որ հիմա դէպի քեզի կը հրէ : Ի՞նչ կարիք կայ քաշկռելու . դէ՛ , գիտցի՛ր , գիշերները երբեմն ամբողջ ժամերով քու համբոյրդ եմ անըրջած միայն . ալ հերի՛ք է , որչափ ինքս իմ հակումներս կոտրել ջանացի . ալ չեմ ուզեր դիմադրել . ո՛չ , ալ յոգնեցայ . եւ ինչո՞ւ , որո՞ւ համար : Հրա՛նտ , ա՛ռ , քաշէ՛ տար ինծի ուր որ կ'ուզես , ըրէ՛ ինծի հետ ինչ որ կ'ուզես . ես ապրիլ կ'ուզեմ . ես կ'ուզեմ սիրելիմ . սիրելի՛ քու ամբողջ սրտովդ , երիտասարդի քու բոլոր կրքերովդ . ա՛ռ , քաշէ տար ինծի՛ , քու սիրուհի՛դ , քու ստրուկդ , կի՛նդ . . .

—Ի՞նչ կը կզււրտիք նորէն իրարու հետ . լսեցաւ դուրսէն մօտեցող տիկնոջ ձայնը , որ դանակի պէս Մինէի թափը կտրեց ու Հրանտի յափշտակուած կաշկանդումը :

—Դէ՛ , հերի՛ք լեզւի տւիք . քալեցէ՛ք վար , մայրիկը պտուղ է շտկեր ձեզի . աւելցուց կինը սենեակի սեմին վրայ կանգ առնելով :

—Ի՞նչ , ո՛վ . հարցուց աղջիկը ցրած . Ու շառագունած դէմքը չփելէն վերջը՝ կոտրած ձայնով մը կցեց .

—Ա՛խ , ո՛չ . ես երթամ պիտի . գործ ունիմ , չեմ կրնար :

—Ձէ՛ ի՞նչ . բացականչեց կինը , Այդ ի՞նչ դալս էր , ի՞նչ երթալ . գալեցէ՛ք վար :

—Ինծի քիչ մը տեղ ճամբու կը դնես , դարձաւ Մինէ երիտասարդին :

—Մէ՛յ մը դուրս նայէ՛ , աղջիկ , ի՞նչ պէս խաւարեր է . ուր որ է հիմա անձրեւը կ'ըսկսի . առարկեց տիկինը :

—Ոչի՛նչ . Հրանտը ինծի կառք մը կը ճարէ :

—Է՛ , դուն խեղժ ես , ըրաւ կինը ձեռքի յուսահատ շարժումով մը :

—Խեղժ էի՛ . չեչաեց աղջիկը :

. . . Ճանապարհը կը ձգէր հոս հոն ցանձնած ամարանոցներու զոյգ շարքի մը մէջէն , որոնց կը յաջորդէր յաճախ պարտէզի մը երկար կիսափուլ պատը , կամ ընդարձակ խաւան տարածութիւն մը , որ գալիք չէնքբրուն տեղը կը փուէր :

Երկինքը սեւցած էր բոլորովին . կապարէ ամպերը վար էին կախէր , կովի հսկայ ծիծերու պէս կաթկըթելու սպառնանքով . հովը հարաւէն կատաղի կը փչէր , որուն դէմ պարտէզի պատին փողոց կախած ծառերը իրենց գլուխները կ'երերցնէին յուսահատօրէն :

Արդէն սակաւաթիւ անցուղարձը դարբեր էր բոլորովին : Ու այդ միակութեան մէջ Մինէ ու Հրանտ թեւ թեւի կը քալէին արագ , Հովը կը փչէր ետեւնուն , ու ակամայ քայլերին աւելի կ'արագցընէին :

Աղջկայ գլխարկը հովէն պատասպարելու համար՝ Հրանտ բացեր էր հովանոցը իրենց ուսին , որուն տակ երկուքը հնար եղածին չափ իրարու սեղմած , կուրծ կուրծքի ,

դէմք դէմքի , ոտքի նոյն չափովը կը յառաջանային :

Կըցկտուր . խառնակ , տաք , իրար ընդհարող , իրարու հիւսւող քրտիտուկ մը հովանոցի խաւարուտ ֆօնին մէջ , որ մէջ ընդ մէջ համբոյրի մը խորհրդաւոր լուծեամբը կը միջակիրուէր :

Այդպէս ալ գուցէ առանց նշմարելու , տեղ հասնէին : Իրենց յափշտակութեան , հովի թափին ու հովանոցին տակ , եթէ յանկարծ փոթորիկը անսանձ շունչով մը գետնին ամբողջ աւազն ու փօշին օդը չի հաներ : Պահ մը ստիպւեցան կենալու , կարելիին չափ հովանոցին ետեւը պաշտպանուիլ փորձելով ու ոտքերնին պինդ գետնին դէմ տալով : Հովանոցին ճառագայթները կորացեր էին կոտորելու աստիճան :

—Ալ շարունակել անկարելի է . նկատեց տղան . Փաշայի պարտէզտին քովը կառքեր կը լինին կեցած սովորաբար . քալէ՛քիչ մը աւելի արագ , հիմա կը հասնինք :

Ու ընկերուհին մէջքէն թեթեւ գրկելով , սկսան վազել հովի հրումին դէմ , փօշիի ամպի մը ետեւէն , որ անոնց առջեւը ճամբան կ'աւէր :

Տղան սխալած չէր . երկու կառք կար հոն կեցած՝ խոչոր ընկուզիների մը թաւ ճիւղերուն տակ պատասպարուած՝ սպառնացող անձրեւէն :

Երբ զոյգը այն կողմ ուղղուեցաւ՝ առջեւի կառապանը սանձերը վերցուցեր էր արդէն :

Հրանտ բացաւ իսկոյն կառքին դռանը , օգնեց աղջկան նստելուն , ինքն ալ մէկ ոտքը կառքի ելարանին՝ ծռեցաւ ներս :

—Վաղը ի հարկէ կը սպասեմ քեզի , ներկատեց Մինէ տղու ձեռքը երկու ափին մէջ առնելով :

Համարուեցան :

—Դէ՛ , ալ աս դիշեր համբոյր անրջելու պէտք չունիս . խնդաց տղան :

Աղջիկը փոխանակ պատասխանի թաթը ծեփեց անոր բերնին . ու հողատար չեչտով մը կցեց :

—Դուն ալ միւս կառքը վերցուր , բաւական ճամբայ ունիս :

—Է՛ , ինծի կառքը ինչ . բացականչեց

Հրանտ ձեռքի ուժգին ու բաղդաւոր շար-
ժումով մը :

Ամուր մը գոցեց կառքի գոնակը , ու
աւոյգ , զուարթ ձայնով մը .

— Հայտէ , շո՛ւտ . պոռաց կառապանին :

Մինէ հազիւ կրցաւ օդէ համբոյր մըն ալ
ձօնել ապակիին ետեւէն , որ ձիերը թափ առին :

Դուրսի հովի գալարումներէն ու ոռնու-
մէն ապահով , անիւներու զզրգումէն խուլ-
ցած , ու զսպանակի անընդհատ ցնցումնե-

րուն մէջ օրօրուն , Մինէ ինկեր էր թոյլ մը
անկիւնը , աչքերը դոց , հեշտանքի անծիր ողող-
ման մը տակ : Իրեն կը թւէր , թէ կտրուած
էր գետնէն ու վե՛րը օդի եւ ամպերու տա-
րածութեան մէջէն կը սլանար . մինա՛կ ու
երջանի՛կ . մինակ իր զգացումներուն հետ ,
իր զեղած սրտին ու Հրանտի համբոյրներուն ,
որոնք իր շրթունքներուն վրայ դեռ կ'այ-
րէին . . . :

(Մնացեալը յառաջիկայ թիւով)

ԽԶՈՒԱԾ ԼԱՐԵՐ ՈՒ ԹՐԹՌՈՒՆ ԹԵԼԵՐ

Կ Ա Ր Օ (Մակարա)

Պ Ը Ժ Ը Պ Կ Ա Ս Ծ Կ Ա Ր Ծ



ԸԶՏԻԿ տղայ մը , հազիւ հինգ տարու ,
Ձեռքերուն վրայ կարծ մ'է անցուցած ,
Կարծ մը՝ մետաքսէ բարակ բելերու ,
Ջանալով կրծկել գայն կամաց կամաց :

Անփորձ նայուածքին տակ բելը նըրբին .
Խոյս կուտայ տղուն մատներէն պըզտիկ ,
Եւ ամէն վայրկեան բելեր կը խըզուին ,
Մետաքսին կակուղ բելերն անաճիգ :


Ի գո՛ւր կը փորձէ տղան կարգադրել ,
Եւ գըտնել ծայրը կնճռոտ շարուածքին ,
Մինչդեռ մետաքսներն հուսկ ապա , բել բել ,
Իրար կը մտնեն ու կը պըճըռկին :

..

Մարդը , — ծերացած այս պըզտիկ տղայ , —
Մեծ խըղիքներու կարծ մ'ունի անծայր ,
Որուն հետ խեղճը անդուլ կը խաղայ ,
Իր ուղեղն անգոր տանջելով խալառ :

Եւ գուցէ յաւետ պիտի չը կրնայ
Գըտնել այդ կարծին բելն առաջնորդող ,
Իր գաճաճ , անշահ մըտքովն անխրնայ՝
Ի գո՛ւր կրկնելով փորձերն անյաջող :

9 Նոյեմբեր



ՈԳԻՍ բիրեղ մ'է, նուրբ, վրճիտ պըրիմակ,
Յորդ ցոյքերու զանակներով առ լըցուն,
Ուր գունառատ նըրբերանգներ փողփողուն՝
Կը դողդըղան սարսուռներով լի համակ:

Ուրախութեան ճաճանջումներն ըսալիտակ,
Ու տըրտմաբոր, խարտեաշ լոյսերն յուշերուն
(Մեռած արփի քըրբումներն այդ նուաղուն)
Ճարըալուծուիլ կուգան հոգուս խորքին տակ:

Այդ պրիմակին բիրեղներուն մէջ անձնիւր՝
Կը քանդակուին ծաղիկները ցովմանց բիւր:
Մի գար, անգութ, մեղմիկ հարուած դու չընջին,

Թէ խորտակես այդ շինուածքը դիւրաբեկ՝
Ցուքերն աղու, կապոյտ, ճերմակ, հըրաշեկ՝
Պրիմակին հետ քայքայուելով կը բըռչին:

20 Յունիս



ԸԻԻՆԵՑ ինծի շուշանը ճերմակ՝
Զոր ակռաներով խածած էր հուրին,
Ներշնչելով շունչն իր մարմնի բոյրին՝
Այդ ծաղիկին մէջ՝ ցողաւետ համակ:

Ու փընտրուեցի անձկութեամբ մը տաք,
Զըլատիչ յայգովն հոգւոյ սարսուռին,
Բուրմունքներն ամեն՝ որ հոն կը քառին,
Փափուկ բերբերուն ագուցուածքին տակ:

Եւ փերըռտելով քերթերը բոլոր՝
Ես հոն չը գըտայ երազ մ'իբրական,
Շուշանէն մընաց լոկ ծըղօտը չոր ... :

Դիմանաճ բաղդն էր հուրին այդ գարնան,
Շուշանն ալ ճերմակ՝ դուն էիր, անշիկ,
Բոյրն ալ՝ սէքս ու ժգին, ալ նուրբ, բըռուցիկ:

10 Օգոստոս



ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸՆԵՆ ՄԵՐ ԿԻՆԵՐԸ

ՆԱՐԿԻՍ



ՈՍԲԵՐԷ յետոյ որոնք վերջերս քանի մը անգամներ կրկնուեցան մեր հրապարակին վը-

րայ, ակնարկելով գործունէութիւն մը զոր կիները պարտաւոր էին սկսիլ, այս օրերս պզտիկ խորտումներ կ'երեւան, որոնք յառաջ եկած են մեր հասարակութեան գեղեցիկ ներկայացուցիչներուն մէջ, և որոնք կ'աւետեն թերեւս վաղահաս կերպով, թէ իրենք ալ կ'ուզեն իրենց կրթական և գրական ինքնուրոյն գոյութիւնը ունենալ:

Քաղաքակրթական պատմութեան հաստատած անվիճելի ճշմարտութիւնն է թէ հասարակութեան մը զարգացումը միշտ այլերէն սկսած է, գոնէ մինչև մեր դարավերջը, և կիներուն՝ զարգացման ճամբուն մէջ ցոյց տուած գործունէութիւնը, կերպով մը արդիւնքը եղած է արական քաղաքակրթութեան մը, ա-

րական զարգացման: Այս կէտը լուրջ ուշադրութեանը կը յանձնեմ մեր հասարակութեան այն բոլոր կիներուն, որոնք կ'ուզեն արդէն իգական ընկերային գործունէութիւն մը սկսիլ մեր մէջ:

Իգական խորտումներու մասին, վերջին շաբաթներու միջոցին շուած զրոյցներն են հաստատել թերթ մը որ կանանց համար և միայն կիներէ խմբագրուած ըլլայ, և ունենալ աղջկանց համար բարձրագոյն վարժարան մը որ միայն կիներէ կառավարուի և բոլոր ուսուցիչները միայն կիներ ըլլան: Կիներու համար թերթ մը և աղջկանց բարձրագոյն վարժարան մը, մեծ պակասներն են տակաւին մեր միջավայրին, բայց այդ պակասները լրացնել ուղուած ատեն եղած պահանջումները, թէ միայն կիներ պիտի ըլլան այդ պակասները լրացնող, չափազանց եռանդի մը միայն կարելի է վերագրել: Ու մանաւանդ եռանդի այս չափազանցութիւնը անգամ մըն ալ կը հաստատէ մեր հասարակութեան նկարագրին մէջ մտած

այն թերութիւնը , որով ծանրաբեռ-
նուած կ'ըլլան բոլոր թերութեան ժողովուրդ-
ները : Այդ թերութիւնն է ձեռնարկ-
կութեան մը ատեն ցոյց տրուած ան-
գիտակցութիւնը՝ հանդէպ ձեռնարկի
ժանրութեան և տեսակ մը խիզախ
համարձակութիւն , առանց մտածե-
լու այն բոլոր պատասխանատուու-
թիւններուն , որոնք ծնունդ կ'առնեն ձեռ-
նարկի մը ատեն :

Մեր հասարակութեան լաւագոյն
կէսը , մտաւորական զարգացման լաւա-
գոյն վիճակ մը չի ներկայացներ դժ-
բաղդաբար , քան թէ այլերը , թերեւս
հակառակը տակաւին ճշմարտութիւն
ըլլար : Ուրեմն մեր կիները իրենց զար-
գացմամբ տակաւին այն տեսակ վիճա-
կի մը մէջ չեն գտնուիր , ուր կարող
ըլլային բոլորովին կանացի ուժերով
աղջկանց բարձրագոյն վարժարան մը
հիմնել և հրատարակել ամսաթերթ մը ,
միշտ լոկ կանացի գրչի արդիւնք : Ամէն
բանէ աւելի պէտք է համազուիլ թէ
մեր կիները նախապատրաստութեան ,
կազմուելու պէտք ունին , ուսկից վերջ
միայն կարող են յաջող կերպով աղջ-
կանց բարձրագոյն վարժարանի և կա-
նանց ամսաթերթի մը գլուխը անցնիլ ,
զուտ կանացի աշխատակցութեան ա-
պաւինելով : Նախ մեր գրականութեան
մէջ գրագիտութիւններու թիւը զոյգ մը
թիւէն անդին դժուարաւ կ'անցնի եւ այդ
զոյգ մը թիւէն թերեւս կէսը մտաւոր բազմ-
ակողմանի զարգացումով մը օժտուած
է , կարող ըլլալով իբրեւ հրապարակա-
գիր իրերը և մարդիկը ըմբռնելու եւ
քննադատելու : Յետոյ ամէն խղճամիտ և
իրազեկ անհատ , ձեռքը խղճին վրայ դնե-
լով կրնայ յայտարարել թէ բարձրա-
գոյն վարժարանի մը ծրագիրը գործա-

դրելու համար մասնագէտ ուսուցչուհի-
ներ չունինք մենք , ու նաեւ մանկա-
վարժ-դաստիարակուհի մը որ ուսուց-
չութիւններու կարողութիւնները զօդող
կապը ըլլայ , անոնցմէ ամբողջութիւն
մը կազմելու համար :

Ըսուածներէն սակայն պէտք չէ հե-
տեցնել թէ այրերուն մէջ մասնագէտ ու-
սուցիչները և կարող գրագէտները ամբողջ
բանակ մը կը կազմեն : Անոնք ալ այսօր
իրենց սահմանափակ թիւովը բոլորովին
անկարող են մեր այնքան բազմակողմանի
պահանջներուն գոհացում տալ : Ինչ որ
մեր ընդհանուր ընկերական պայմաննե-
րուն համար ամէնէն կենսականն է ,
մարդ պատրաստելու խնդիրն է այն ,
ըլլայ գեղեցիկ սեռին , ըլլայ ագեղ սե-
ռին մէջ : Մեր հանրային կեանքին մէջ
չատ մը պակասներ ունինք , որոնք կը
դարմանուին միայն կարող գիտակից
անհատներու ձեռնարկութիւններով :
Կ'ընդունինք թէ կանանց թերթ մը , և
աղջկանց բարձրագոյն վարժարան մը
հասարակութեան մը համար անհրա-
ժեշտ հիմնարկութիւններ ըլլան , բայց
միեւնոյն ատեն պէտք է գիտնալ թէ այդ
հիմնարկութիւնները այն ժամանակ ի-
րենց բարերար դերը կը կատարեն ըն-
կերութեան մը մէջ , երբ անոնց վար-
չութիւնը յանձնուած է գիտակից կա-
րող անհատներու , և որոնք իրենց չորջ
կրնան հաւաքել կարող աշխատակիցներ :

Ես այն հաստատ համոզումը ունիմ
որ մեր զարգացած կիներու շատ սահմա-
նափակ թիւը կարող չէ աղջկանց փ-
պար բարձրագոյն վարժարան մը ունենալ
և միայն կիներէ խմբագրուած բազմա-
կողմանի ամսաթերթ մը հիմնել : Բայց
ներկայ անկարողութիւնը պատճառ մը
չէ որ այլեւս միտքէ հանենք այդ գա-

զափարնելը որոնք այնքան կենսական խնդիրներ կը բովանդակեն իրենց մէջ, այլ պէտք է դիտնանք պատրաստուիլ, որ մը կարող ըլլալու համար, այդ բոլոր բաները իրագործելու : Եթէ եռանդոտ կիներ կան մեր մէջ, որոնք կ'ուզեն իրենց քոյրերու զարգացման համար օգտակար գործ մը կատարած ըլլալ, թող այնատին ամէնէն առաջ տիպար բարձրագոյն նախակրթարան մը ունենալ (ոչ թէ ուսումնարան) որուն համար իրենց ուժերը հազիւ պիտի բաւեն : Իսկ ինչ որ ապագային, մեր զարգացած կիներու մակարդակը պիտի բարձրացնէր, ապահովապէս այն պիտի ըլլար, երբ մեր հանրային գործունէութեան մարմալէն բռնուած կիները, նոյն իսկ այրերուն վրայ առաջնութիւն մը ունենալու խթանէն մղուած, ընդունակ քանի մը աղջիկներ ղրկէին Եւրոպական համալսարաններ, զանազան մասնագիտութիւններու և ընդհանուր զարգացման հետեւելու համար : Եւ երբ գոնէ տաս-

նեակ մը բարձրագոյն զարգացման տէր կիներ ունենայինք մեր միջավայրին մէջ, այն ատեն իգական շարժման եռանդոտ կուսակիցները կրնային ապահով ըլլալ, թէ արդիւնաւոր գործի մը առաջնները արդէն պատրաստ են : Ինչո՞ւ համար մեր կիները խնամակալութիւն մը չունենան որ ամէն ջանք ի գործ դնէր քանի մը օժտեալ աղջիկներ Եւրոպա ղրկելու համար, որպէսզի անոնք ապագային դառնալով կարող ըլլային, իրենց այսօրուան երազած բարձրագոյն աղջկանց վարժարանը և կանանց ամսաթերթը հիմնել : Բարձրագոյն կրթութիւն ստանալու համար աղջիկներ Եւրոպա ղրկելու ծրագրով կիներէ կազմուած խնամակալութիւն մը, դիւրաւ պիտի յաջողէր իր ծրագրածը ի գլուխ հանել, ու առ այժմ ասով չատ աւելի օգտակար գործ մը կատարած պիտի ըլլար, քան թէ թերի ոյժերով կազացող ու անգոյն բարձրագոյն վարժարան մը և ամսաթերթ մը հիմնելով :

ՌՈՒՍ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Մ. Ե.



ԷՆԸՆԿԵՑՈՒԹԵԱՆ
դեռ պանախորհուրդի
գումարման նախորդ
իրիկնամուտին, երբ Եւրոպայի մէջ այն-
քան կը խօսուի ու կը գրուի այն ար-

դիւնքներու մասին որոնք հետեւանք-
ները պիտի ըլլան Լա Հէյի գումարումնե-
րուն, միեւնոյն ատեն քաղաքական աշ-
խարհին մէջ ալ տեղի կ'ունենան այն
տեսակ երեւոյթներ, որոնք աւելի պղա-
տնական գոյնի մը մէջ կը պարուրեն
դիւանագէտներու խորհրդակցութիւն-
ներէն գոյանալիք արդիւնքը :

Այդ երեւոյթներուն մէջէն ամէնէն

յատկանշականն է Ռուսեւանգլիական համաձայնութիւնը, Չինաստանի մէջ ձեռք առնուելիք քաղաքականութեան մը մասին: Իսկ երկրորդը, եթէ գերմանական կառավարութիւնը իր կողմէ Զէնընկեցութեան դեռ պահանջները իբր ներկայացուցիչ այնպիսի անձեր կը դրկէ որոնք ժամանակին այնքան կը ծու կերպով կը քննադատէին Չարին առաջարկը և յայտնի հակառակորդներն են անոր, որոշ ձգտումի մը նշանակութեան զուրկ պէտք չէ նկատել այդ պարագան: Նմանապէս երբ զէնընկեցութեանն առաջ համաձայնութիւններ կը կընքուին, զանազան առանձին պետութիւններու միջեւ, ծնունդ տալով ներկային մէջ եղածներէն աւելի ուժով մարմիններու, պարզ է որ ատով ոչ թէ ընդհանուր զէնընկեցութեան գաղափարին իրականանալը կը դիւրանայ, այլևս նոր խոչընդոտներ կ'աւելնան ընդհանուր աշխարհի քաղաքականութեան մէջ, մեռելալ տառ մը դարձնելու համար Չարին մարդասիրական ձգտումներով համակուած առաջարկը:

Այս տեսակ խոչընդոտներու գլխաւորն է Ռուս և Անգլիական համաձայնութիւնը, ծայրագոյն Արեւելքի քաղաքականութեան մը չորսը: Ռուս և Անգլիական կառավարութիւնները երբ համաձայնութեան մը չէին հասած տակաւին, Լոնտոնի և Բեթրապուրկի յարաբերութիւնները այն աստիճան լարուած էին որ նոյն իսկ մօտալուտ բախում մը երկուքին միջև օրուան ամէնէն մեծ հաւանականութիւնը կը թուէր ըլլաւ: Պատերազմի սպառնալիքով ուռած ամպեր քաղաքական հորիզոնին վրայ, թէեւ մէկ կողմէն բոլոր մեծ պետութիւնները սպառազինութիւններու նո-

րանոր պատրաստութեանց կը մղէին, բայց միւս կողմէ, այն կէտը թէ երկու մեծ պետութիւններու միջեւ պատերազմ մը կրնար շատ դիւրաւ մեծ համեմատութիւններ առնել և ընդհանուր դառնալու հանգամանքները ստանալ, ճիշդ այս պատճառաւ, սպառազինակոն պատրաստութիւններու մէջ իսկ, իւրաքանչիւր մեծ պետութեան փափագն էր ընդհանուր համաձայնութեան մը հասնել, քանի որ սպառնացող վտանգը ընդհանուր էր: Եւ ընդհանուր համաձայնութեան մը պայմաններուն մէջ կարելի էր ընդհանուր զէնընկեցութեան մը իրականացման մասին յոյսեր տածել: Ռուս և Անգլիական համաձայնութիւնը վերջ մը կը դնէ այդ տեսակ յոյսերուն, մինչեւ որ նորէն ծնունդ առնէ բոլոր մեծ պետութիւնները շահագրգռող այն տեսակ ինդիւի մը, որուն շուրջ իրենց մէ երկուքը լուրջ երկպառակութիւններու բռնուին, ընդհանուր անդորրութիւնը վրդովելու սպառնալիքով:

Չինաստանի մասին երբ դեռ որ և է համաձայնութիւն մը գոյացած չէր, բոլոր մեծ պետութիւնները կը կարծէին հաւասարապէս յառաջ տանելու վիճակին մէջ ըլլալ, իրենց հոգեր սեփականացնելու քաղաքականութիւնը: Այսօր Անգլիացիներուն և Ռուսերուն համաձայնութիւնը Չինաստանի մէջ, որ կրնայ նաեւ, անհրաժեշտ պարագաներու, նիւազակցութեան ալ փոխուիլ, կը հարկադրէ միւս բոլոր մեծ պետութիւնները, որպէս զի իրենք սպառազինական նորանոր միջոցներու դիմեն, թոյլ չտալու համար որ Ռուսիա և Անգլիա առանձին գերակշռեն միւսներուն վրայ: Չինաստանի մէջ: Ծայրագոյն Արեւելքի մէջ, այժմ իր դիրքը ամէնէն աւելի խախտած նկատող պետութիւնն է Գեր-

մանիա, յետոյ կուգան իտալական և ֆռանսական կառավարութիւնները: Իսկ Մ. Նահանգներու կառավարութեան հաշուին ալ չի գար, որ երկու պետութիւններ ընդհանուրէն աւելի ազդեցիկ դիրք մը ունենան Չինաստանի արտաքին գործերու պաշտօնատան մէջ:

Չինաստանի բնական ժառանգորդը Ճաբոնն է: Ուստի ամէնէն աւելի ճաբոնական շահերն են հանդէպ Չինաստանի, որոնք կը փնտտուին երբ իրեն երկու մրցակիցները համաձայնութիւն մը կը կնքեն իրենց միջեւ, միասին յառաջ քաշելու համար: Միւս կողմէն ալ Գերմանիա և Մ. Նահանգները թերեւս սղեն օգտուիլ Ճաբոնի այս տրամադրութենէն, իրենց և Ճաբոնի միջեւ նոր համաձայնութիւն մը գոյացնելու համար, որ կարող պիտի ըլլար ամէն կերպով Անգլուսականը հակակշռել:

Անգլիա իբր գասական երկիրը գաղթային պետութեան, որ իր տնտեսական բարգաւաճումը իր գաղթականութիւններուն կը պարտի, Չինաստանի մէջ կը հետեւէր ազդեցիկ քաղաքականութեան մը, որովհետեւ այն տեղուանքը, իր ազդեցութեան շրջանակին ընդլայնուելով, ապագայ տնտեսական նորանոր յաջողութիւններ կը հաւատար ձեռք անցնէ: Միւս կողմէ Ռուսիա, Մեծն Պետրոսի ժամանակէն ի վեր, Ծալրագոյն Արեւելքի ճամբուն երկարութեանը, կ'ուզէ գերակշռող ազդեցութիւնը ունենալ: Միեւնոյն ատեն ներկայ ժամանակիս տնտեսական և դիւանագիտական բոլոր սկզբունքներէն մղուած, Ռուսիա չուզեր որ իր ընդհանուր գործունէութեամբ Անգլիական և Գերմանական պետութիւններէն ետ մնայ տիեզերական մրցումի մը մէջ: Տիեզերական

մրցումի մը ատեն ուժով ըլլալու նախապատրաստական գործին սկզբնաւորութիւնն էր արդէն Սիպերիական երկաթուղիին շինութիւնը, որով Ռուսական ահագին կայսրութեան կեդրոնը կը կապուէր իր ծայրագոյն կէտերէն մէկուն, ուրկէ յառաջիկային պզտիկ տուննձգութիւն մը դէպի դուրս, ամբողջ կայսրութեան առջև պիտի բանար գործունէութեան նոր ու չի շահագործուած ասպարէզներ, աւելի մղում մը տալով իւր ժողովրդի տնտեսական կեանքի բարգաւաճումին:

Միւս կողմէ Անգլիա ալ մանաւանդ իւր Հնդկաստանովը միեւնոյն նկատումները ունի հանդէպ Չինաստանի և Ռուսիոյ յառաջխաղացութիւններն ալ չեն յարմարիր իր հաշիւներուն:

Վերջին տարիներու միջոցին շատ մը հաշիւներ եղած են երկուստեք, դիւանագիտական ակումքներ ու դահլիճներ իրենց գլուխները բաւական յոգնեցուցած են այս հաշիւներուն վրայ, ու միւս կողմէն ալ դրական ոյժը երկուստեք տուած է իր գործնական արդիւնքը Չինաստանի մէջ, մանաւանդ անցեալ տարւոյ վերջերէն ի վեր, Ռուսիա և Անգլիա, երկնային կայսրութեան մէջ այն տեսակ դիրքով մը եղած են իրարու դէմ, որ ընդհարում մը կամ խանդակաթ հարում մը անխուսափելի էր: Ընդհարումի մը մղձաւանջներէն յետոյ, այսօր այդ երկու պետութիւնները հասած են համաձայնութեան մը, միասին քաշելու համար այդ ասարածութիւններուն վրայ, որոնց համար ու որոնց վրայ կռիւ մը տակաւին հաւանականութիւն մըն էր մէկ երկու ամիս տուալ:

Այսօր Ռուս եւ Անգլիական համաձայնութեամբ մը, ճշմարիտ է որ յարաբերութիւնները կը բարոյքին Լոնտոնի եւ Բեթերսպուրկի միջեւ. բայց պէտք է գիտնալ որ ասով ընդհանուր սպառազինում մը միշտ օրուան անհրաժեշտութիւնը կը մնայ:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Կը հրատարակուի վիեննայի Միխիթարեան Միաբանութեան կողմէ, ամէն ամսոյ սկիզբին : Տարեկան բաժանորդագրինն է 10 ֆրանք ոսկի, վեցամսեան 6 ֆրանք, ձեռքէ կը ծախուի հասը 1 ֆրանքի : Խմբագրութեան հասցէն է A la Rédaction de la Revue HANTESSSE, Vienne (Autriche) VII|2 Mechitaristengasse 4.

ԲԱԶՄԱՎԷՍ

ՀԱՆԴԵՍ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբին, վենետիկի Ս. Ղազարու վանքի Միխիթարեան Միաբանութեան կողմէ, բանասիրական բովանդակութեամբ : Տարեկան բաժանորդագրութիւնը կ'արժէ 10 ֆրանք : Դիմել հետեւեալ հասցէով : Rédaction de la Revue L'AZMAVEB, St. Lazare, Venise (Italie).

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ծօրինեց Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ. Բ. Տպագրութիւն, հիմնովին բարեփոխուած. տպագրութիւն Յ. Մատթէոսեան, Կ. Պոլիս 1899 : Դին 6 շրշ : Ազգ. Կեդր. վարչութեան Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած :

Արտատպէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ — Թիւ 27, Ֆինճանճըլար եօզուշու, Կ. Պոլիս

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ , ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի ընդհանուր Ռուսահայ եւ Տաճկահայ հեղինակներէ , որպէս զի իրենց հեղինակութենէն հաճին մէյ մէկ օրինակ ուղարկել Խմբագրութեան , թերթիս տնօրէնին հասցէով : Խմբագրութեանս ուղարկուած գրքերը թերթի կողքին վրայ պիտի ծանուցուին , եւ անոնցմէ շահեկան բովանդակութիւն ունեցողներուն տարրալուծումը պիտի ներկայացուի ընթերցողներուն :

«ՄԱՍԻՍ» ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՒԱԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	44 դր.
Վեցամսեայ	12 » (384 էջ)	22 »
Եռամսեայ	6 » (192 էջ)	11 »

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	54 դր.
Վեցամսեայ	12 » (384 էջ)	27 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	12 ճրանգ
Վեցամսեայ	12 » (384 էջ)	6 »

«ՄԱՍԻՍ» ԶԵՌԻՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐԾ.

Մասիսի վերաբերեալ ամեն նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել թերթիս տնօրէն-խմբագրին

ՄԻՔԱՅԷԼ ԳԱՄՏԱՆԺԵԱՆ

Սթամպոլ , Պայպըլ Հաուզ , Յ. Մասթէոսեան Տպարան

Stamboul, Bible House, Imprimerie H. Matteosian

Կ'ընդունուին ամեն տեսակ ծանուցումներ:

Կ. Ս. Իւթիւնեանի թարգմանած գրքերէն հետեւեալները մնացած են
և ասոնք ալ սպառելու վրայ :

Թափառական Հրեայ	4	հատոր	գին	50	դրշ.
Ընտանեղուրկ	2	»	»	12	»
Կարմիր մարդոց երգումը	2	»	»	10	»
Ամուսնութիւնք Փարիզի	1	»	»	5	»
Սկզբունք Քաղ. Տնտես.	1	»	»	3	»
Պատ. Օրինագիրք	1	»	»	2	»

Կը գտնուին Պոլսոյ հայ գրավաճառաց քով :

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ ԱՌԹԻԻ



Գարնան գեղեցիկ օրերը արդէն ծայր տուած են , և
չատեր պէտքը կը զգան իրենց արիւնը մաքրելու համար
բժշկական միջոցներու դիմել : Թէյը իր շատ մը յատկու-
թիւններէն զատ , ունի նաեւ արիւնը մաքրելու յատկու-
թիւնը , միայն պէտք է թէյին տեսակը և պատրաստելու
եղանակը գիտնալ : Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
թէյի վաճառատան զանազան տեսակներէ պատրաստած
խառնուրդ թէյերը ամէնէն աւելի արիւնը մաքրելու յատկութիւնը ու-
նին , ուրկէ պէտք է անպատճառ օգտուիլ : Փորձեցէք յիշեալ վաճա-
ռատունէն տուի մը միայն առնելով , և տուփին մէջ արդէն պիտի
գտնէք այն բոլոր պատուէրները , որոնցմով միայն պէտք է պատրաստել
թէյը , իբրեւ արեան մաքրելու դեղ կարենալ դործածելու համար :

Ուշադրութիւն վաճառատան մարքային :

Վաճառատունը կը գտնուի Ճէլալ պէյ խանին օակ , ԲԻԷ 10